

# ԱՎԵԴԱՊԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

The Weekly **AVEDAPER**, American Bible House, Constantinople.

ՀԱՏՈՐ ԿԵ

Կ. ՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 3, 1912

ԹԻՒ 5



ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
Տ. Տ. ԳԷՈՐԳ ԱՐԲ. ՍՈՒՐԷՆԵԱՆՑ

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

- ՀՈՐԻՋՈՆԸ. Իտալական նաւային գրաւումներ, Չինական տագնապը և ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Հարստութիւն :
- ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ. Հրեշտակներու երգը, Նորէն ծնած մարդիկը Չինաստանի մէջ :
- ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ. Բունը մանկական տարիքին մէջ, Իրապէս համբ, Առաջին Ծնունդի-ծանր :
- ՅՕԻՈՒԱԾՄԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱԴԻՆ. Եկեղեցական ընդհանուր կանոնագրի մը պէտքը, Յաջողութեան գինը, Ֆրանց Եոզէֆ, Հայ կեանքը :
- ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ



### ՀՈՐԻԶՈՆԸ

**Ի**ՏԱԼԱԿԱՆ ՆԱԽԱՅԻՆ ԳՐԱԴՐՈՒՄՆԵՐ Թէև Ֆրանսայի և Իտալիոյ միջեւ ծագած վէճը հարթուեցաւ բժիշկներուն ու հիւանդապահներուն արձակմամբ, Տէյլթ Թէլէրաֆի հետեւեալ հրատարակութիւնը շահեկանութիւն ունի՝ ցոյց տալով այն տպաւորութիւնը զոր Իտալիոյ բուռն ընթացքը յառաջ բերաւ Ֆրանսայի մէջ .

Անկարելի է չապշիլ Իտալական կառավարութեան անշրջաճայեցութեան վրայ : Ֆրանսայի կարծիքն յանկարծ սաստիկ գրգռուեցաւ Իտալիոյ դէմ, մինչ չարաթ մը առաջ Իտալիոյ ամէնէն ամուր հեցուկն էր միջազգային կացութեան մէջ : Իտալեթուրք պատերազմին սկսելէն քիչ ետքը բովանդակ Իտալիոյ շրջանն ըրի, և տեսայ թէ ամէն տեղ պաշտօնական թէ անպաշտօն զգացումը սա էր թէ, եթէ ամէն ուրիշներ Իտալիոյ դէմ դառնան, գէթ Ֆրանսա պիտի պաշտպանէ դայն Տրիպոլսեան իր արշաւանքին մէջ : Բարոյական աջակցութիւնը պարագայ մը չէ այսպիսի ձեռնարկներու մէջ : Իտալեթուրք պատերազմին անցեալ բովանդակ շրջանին մէջ Ֆրանսայի բարոյական աջակցութիւնը երբեք չխնայուեցաւ Իտալիոյ : Ֆրանսացի թղթակիցներ հերոսաւթալ պատիւներ գտան : Նախօրիէ մինչեւ Միլան Իտալական ժողովուրդը Ֆրանսական թերթերէ կոչում կ'ընէր խանդավառութեամբ : Միակ բացառութիւնը տեղի ունեցաւ Փարիզի պատկերազարդ շարաթաթերթի մը նկատմամբ, որ Հոռոմի մէջ մերժուեցաւ Իտալացիներու Տրիպոլսեան խրժողժութիւններու պատկերներ հրատարակելուն պատճառով :

Ֆրանսական երկու շոգենաւերու գրաւումը քանի մը օրուան մէջ ամէն բան փոխեց : Փարիզի մէջ սաստիկ զայրոյթ յառաջ բերաւ այն խիզախութիւնը որով Իտալական նաւատորմը վարուեցաւ Ֆրանսական շոգենաւու մը եռագոյն դրօշին հետ : Գործն ի նկատ կ'առնուի ոչ միայն իւրեւ առեւտրական միջադէպ, այլ և իբրև միջազգային քաղաքականութեան ծանր խնդիր մը : Յոռետեսներ մատնանիչ կ'ընեն նախ թէ Հէր Ֆոն Բիտէրլէն Վէլթըր Հոռոմ կը գտնուի, և երկրորդ թէ Գերման զրօշով նա մը կենալու հրաման ստանալէ ետեւ թոյլատրուեցաւ ճամբան շարունակել, մինչդեռ Ֆրանսական երկու շոգենաւերը գրաւուեցան :

Ինչո՞ւ Իտալիա վշտացուց այն երկիրը որ անկասկած իր զլխաւոր պաշտպանն էր արկածախնդր-

ական ներկայ իր ձեռնարկին մէջ՝ աւելի իսկ քան իր երկու պաշտօնական ղինակիցները : Աւստրիոյ վրայ բան մը չեմ բսեր ակներեւ պատճառներով : Բայց Գերման պետութեան մէջ Իտալիա այնքան կատարեալ — թերևս շահախնդրական — հաւանութիւն չէր գտած որքան տարիներէ ի վեր կը գտնէր Տրիպոլսի մէջ Ֆրանսայի կողմէ : Հարկաւ Ֆրանսայի այդ ընթացքը զուտ վեհանձնութեան գործ չէր, այլ առեւտրական սակարկութիւն մը : Իրողութիւն է սակայն թէ Ֆրանսա բացարձակապէս հաւատարիմ մնաց այդ սակարկութեան, բնաւ բան մը չըսաւ Իտալիոյ Տրիպոլսեան արշաւանքին դէմ և բոլոր մեծ պետութիւններուն մէջ ինք միայն տուաւ բացարձակ հաւանութիւն : Դեռ շատ լաւ կը յիշեմ թէ Թուրք դեսպան մը ինչպէս ողբաց ինծի այդ կէտին վրայ . « Ֆրանսա, մեր նախկին բարեկամը, ձեզի հետ, լքեց մեզ : Ինչ ապացոյց կայ թէ ինք ալ օր մը Միւրիա պիտի չարշաւէ, քանի որ Իտալիոյ թոյլ կու տայ Տրիպոլիսը խլել մեզմէ : »

Ստոյգ է թէ Իտալիա կանխամտածութեամբ մերժեց բարոյական ինչ աջակցութիւն որ կ'ընդունէր Ֆրանսական կարծիքէն : Ինչո՞ւ մերժեց : Ահաւասիկ ճշմարտանման մեկնութիւն մը . Ելեւմտադէտներու զարմանք կը պատճառէր սա իրողութիւնը թէ Իտալիա կրցաւ այսքան ժամանակ պատերազմի առանց ըստ երևութին իր ջիղերը նորոգելու : Կ'ըսեն անոնք թէ Իտալեան կառավարութիւնը խոհեմութեամբ հարցուց թէ արդեօք Ֆրանսական կառավարութիւնը պիտի թոյլ տայ որ Իտալեան նոր փոխառութիւն մը հանուի Փարիզի հրապարակին վրայ, և թէ Ֆրանսական կառավարութիւնը չէզոքութեան օրէնքները յարգելու հաստատ որոշմամբ մերժողական պատասխան տուաւ : Ֆրանսական հրապարակը, որ դեռ վերջերս Ֆրանսական համայնքի մը 3 առ հարիւր տոկոսաբեր 80,000 Անգլ. ոսկինոց նոր փոխառութեան մը 20 պատիկէն աւելին ստորագրեց քանի մը ժամու մէջ, կրնար և կ'ուզէր իր դրամը հարիւրին 4 տոկոսով թափել Իտալիոյ պատերազմական արկղը, եթէ Ֆրանսական կառավարութիւնը թոյլ տար : Բայց այդ թոյլտուութիւնը չէզոքութեան բռնաբարում պիտի ըլլար ի վնաս Թուրքիոյ : Կրնա՞յ մէկը կարծել թէ Ֆրանսական երկու նաւերը սոսկ այս զաղտնի պատճառով գրաւուեցան :

Իտալեֆրանսական ներկայ վէճին պարագաները պարզ են : Ֆրանսական շոգենաւ մը բռնուեցաւ, վասն զի իր մէջ ունէր սաւառնակ մը, ուրիշ մը ևս, վասն զի 29 Թուրք կը փոխադրէր : Երկու



նաւերն ալ արձակուեցան, նախ վասն զի սաւառ-  
 նակին տէրը յանձնառութիւն մը ստորագրեց թէ  
 օրհնաւը Տրիպոլիս պիտի չտարուի, և երկրորդ  
 վասն զի 29 Թուրքերը Իտալական իշխանութիւն-  
 ներուն յանձնուեցան: Առաջին խնդրին նկատմամբ  
 կ'իմանամ թէ Ֆրանսական կառավարութիւնը որո-  
 շակի մերժեց երաշխաւորել ստորագրուած անհա-  
 տական յանձնառութիւնը: Իսկ երկրորդին նկատ-  
 մամբ հակընդդէմ տեղեկութիւններ կը տրուին:  
 Մանուկայի նաւապետը կ'ըսէ թէ ինք 29 Թուրքերը  
 յանձնեց ի Քալիարի Ֆրանսական հրւպատոսին հրա-  
 մանով, եթէ ոչ իր նաւը պիտի զբաւուէր: Իսկ  
 Ֆրանսայի Արտաքին գործերու նախարարութիւնը  
 կ'ըսէ թէ այդպիսի հրաման չտրուեցաւ երբեք իր  
 ներկայացուցիչներուն: Խնդիր է ուրեմն թէ ո՞վ  
 տուաւ 29 Թուրքերը Իտալական իշխանութիւն-  
 ներուն յանձնելու հրամանը:

Ինչ որ պարզ է՝ սա է թէ Ֆրանսական շոգե-  
 նաւուն ետագոյն դրօշը, որու ներքեւ կը նաւէին  
 29 Թուրքերը, չպաշտպանեց զանոնք Իտալիոյ  
 կողմէ ձերբակալուելու վտանգէն: Ահա այդ է  
 միակ կէտը որ զայրացուց Ֆրանսական կարծիքը:  
 Ֆրանսական կառավարութիւնը այսօր (Յունվ. 21)  
 Հռոմի իր դեսպանին հրահանգներ զրկեց, և պատ-  
 ճառ ունիմ հաւատարու թէ համաձայն են անոնք  
 Ֆրանսական կարծիքին, որ կը պահանջէ նախ ան-  
 պայման արձակել 29 Թուրքերը և ապա ձեռնար-  
 կել բանակցութեան: Ֆրանսական կարծիքը անց-  
 եալ ամիսներու փորձառութիւններէն ետքը պա-  
 տերազմի չփափաքիր, բայց զիւրազգած է, և Ի-  
 տալական կառավարութեան համար քաղաքագի-  
 տութեան հակառակ պիտի ըլլայ դայն գրգռել:

**ՊԻՆԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ.** Տէյնթ Թէէէրֆի հետեւ-  
 եալ երկու հատուածները  
 Չինական մեծ պետութեան ողբալի վիճակը կը  
 պատկերացնեն.

Կայսեր հրաժարման խնդիրը դեռ առկաի կը  
 մնայ. Հրաժարումը ծանուցանող հրովարտակը  
 պատրաստուած է, բայց դեռ չէ կնքուած: Իսիլիսի  
 և Կայս. իմբալին անհամար ժողովներով, զորոնք  
 մանրամասնել անօրուա է, որոշ հաստատուեցաւ  
 թէ Եուանչիքայ և կառավարութիւնը կը փափա-  
 քին վարչութիւնը Թիէնցին փոխադրել Հիւսիսի  
 առժամեայ կառավարութեան պատրուակով: Այ-  
 նուհետեւ տեղի պիտի ունենայ Մանչու դերդաս-  
 տանին պաշտօնական հրաժարումը, որով աղբը  
 պիտի կրնայ անկաշկանդ քուէ տալ թէ հանրա-  
 պետութիւն կ'ուզէ թէ սահմանադրական միապե-  
 տութիւն: Եուանչիքայ այս ծանրակշիռ ժողովնե-

րէն բացակայելով ցուցած է թէ կատարելապէս  
 անկողմնակալ է ինք և կը բաղձայ միայն արձա-  
 նագրել ու գործադրել ազգային կամքը: Բայց թէ և  
 Չինկ իշխանը և չափաւոր իշխաններ անմիջական  
 հրաժարում կը պահանջեն, անհաշտներէն ոմանք,  
 և մասնաւորապէս Յայթաօ իշխանը, կ'ըսեն թէ  
 ատոր բնաւ չեն հաւանիր: Պահակագորաց առա-  
 ջին կիսաբաժնի 31 բարձրաստիճան սպաներ անց-  
 եալ շարթու ըսին թէ հրաժարման քաղաքակա-  
 նութեան հաւանութիւն չունին և իրենց մարդիկը  
 պիտի արձակեն, եթէ այդպէս որոշուի: Մայր  
 Կայսրուհին հակընդդէմ յանձնարարութիւններու  
 պատճառով շուարած է բոլորովին: Յունվ. 19է ի  
 վեր օտարազգիները շատ տաղնապած են, մանա-  
 ւանդ Ամերիկացիները, որ դեսպանատուն կ'ա-  
 պաստանին: Այլադան զրոյցներ կան թէ կարգ մը իշ-  
 խաններ համամիտ էին Եուանչիքայի կեանքին դէմ  
 դաւողներուն: Վութիւնկֆանկ Յունվ. 20ին, Հան-  
 րապետականներու վերագրուած դաւերու պատճա-  
 ռով, հեռագրով պահանջեց վերսկսել թշնամու-  
 թիւնները: Կը հաստատուի թէ Հանրապետական-  
 ները քանի մը տեղ մարդ հանած են Շանթունկի  
 ծովեզրը: Պաշտօնական աղբիւրէ կ'իմանամ թէ  
 Փեքինի կառավարութիւնը պիտի պարտաւորի Չի-  
 նու նոր տարեմուտին (Փետ. 18) անանկ հոչակե  
 զՉին:

Յունվ. 17ին Փեքին հասան օգնական զօրքերը:  
 Տխուր շատ փորձառութիւններ ունեցան անոնք:  
 Շէնսիի, Շանսիի և Հոնանի նահանգները անիշխա-  
 նական վիճակի մէջ գտան: Օրինազուրկներ և յե-  
 ղափոխականներ չէին որոշուեր, մինչ Կայսերա-  
 կանները նոյնքան անօրէն էին և տեղ տեղ կիներ  
 կ'սպաննուէին վայրագօրէն: Քաղաքներ ու զիւ-  
 ղեր ամայացած են և ժողովուրդը լեռներու ան-  
 ձաւներու մէջ կը պահուերտի: Սիանֆուի սպանու-  
 թիւնները սոսկալի են: Խուժանը գործեց զանոնք  
 Պէքմընի դպրոցը պաշարելով և անոր վրայ երեք  
 կողմէ հրաղէն պարպելով: Յետոյ տապաւնեցով,  
 թիբրով և նիզակներով յօշոտեց փախչող աղաքը:  
 Քաղաքին զոները չորս օր գոցուեցան, մինչ խու-  
 ժանը իր 10,000 անձ կ'սպաննէր, ինչպէս կը հաշ-  
 ուուի: Մանչուները կը կարծեն թէ օտար կառա-  
 վարութիւնները բոլոր օտարականներուն՝ պատ-  
 ուիրելու են Չինու ներքին քաղաքներէն հեռա-  
 նալ: Քանի մը միսիոնարներ, պարտականութեան  
 սխալ ըմբռնումով մը, յամառեցան չմեկնիլ առանց  
 պաշտօնական հրամանի:



# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ  
Հ. Ս. Պ.

**Բ**ԱՐԵԿԱՄ մը բարեհաճեցաւ մեզի ընկերվարու-  
թեան վրայ յօղուածաշար մը զրկել,  
որ վստահ ենք թէ շահագրգռական պիտի ըլլայ մեր  
ընթերցողներուն, ամէն կէտի մէջ անոր համա-  
միտ ըլլան թէ չըլան: Այդ յօղուածներուն ա-  
ռաջինին հրատարակման առիթով ըսինք թէ Աւե-  
րաբէր պատասխանատու չէ յօղուածագրին հայ-  
եացքներուն համար: Իրագել և բարի մէկն է  
յօղուածագիրը, բայց նիւթը որու վրայ կը գրէ  
կարծիքի մեծ դանազանութիւն յառաջ բերած է  
այնպիսիներու մէջ որոնք երբեք զբաղած են ա-  
նով:

Սա է հիմնական հարցը. Ամէն ստացուած հա-  
մայնքին կամ հանրութեան պատկանելու է թէ  
անհատներու բաժնուելու է, իւրաքանչիւր ոք ի-  
րեն սեփականելով ինչ որ կրնայ օրինապէս ստա-  
նալ ժառանգութեամբ կամ անձնական աշխատու-  
թեամբ և առեւտրական ճարտարութեամբ: Հա-  
ւանօրէն քիչեր պիտի ընդունին իր տրամաբանա-  
կան ծայրայեղութեան տարուող ընկերվարակա-  
կանութիւն մը, որ կը սորվեցնէ թէ համայնքը  
ամէն ինչ է, իսկ անհատը ոչինչ: Թէ իւրաքան-  
չիւր մարդ ո՛ւր պիտի ընակի, ի՛նչ պիտի ընէ, քա-  
նի՛ ժամ պիտի աշխատի և ի՛նչ վարձք պիտի ըն-  
դունի, ինչպիսիք են զօրոնք համայնքը պիտի լու-  
ծէ՝ անհատին նախասիրութիւնը և ճաշակը նկա-  
տելով կամ չնկատելով: Այսպիսի գրութիւն մը  
կատարեալ աշխարհի մը մէջ կրնայ լաւ ըլլալ: Ե-  
թէ ամէն ոք իր անձին պէս սիրէր ուրիշներ, ե-  
թէ բարոյապէս անկարող ըլլար անիրաւութիւն ը-  
նել կամ իր վրայ գրուած պարտականութիւն մը  
անտեսել, եթէ հանրային բարօրութեան համար  
նոյնքան մեծ ու տիրական իղձ ունենար որքան  
կ'ունենայ իր անձնական օգտին ու զարգացման  
համար, այն ժամանակ կրնայինք ըսել, Բարեաւ գայ  
ընկերվարութիւնը, տիպար գրութիւն է այն: Բայց  
աշխարհը զոր երեւակայեցինք՝ չէ այն որու մէջ  
կ'ապրինք:

Սակայն շատ ընկերվարականներ այդքան ծայ-  
րայեղութեան չեն դիմեր: Ոմանք կ'ըսեն թէ հողը  
համայնքին պատկանելու է: Մարդիկ գործարան,  
մեքենայ և շոգենաւ կը շինեն, կ'ըսեն, և կը վայ-  
լէ որ իրենց աշխատութեան շահը վայելեն: Բայց  
հողը Բնութեան պարգևն է: Ոչ ոք չի կրնար զայն  
և ուստի ոչ ոք իրաւունք ունի զայն սեփականե-

լու: Այս հայեացքը առիթ եղաւ «միմիակ տուրքին»  
վարկածին, որու ամէնէն նշանաւոր ներկայացու-  
ցիչն էր Նիւ Եորքի հանգուցեալ Հէնրի Ճորճ: Ու-  
րովհետեւ հողային ստացուածը ամէնուն կը պատ-  
կանի, կ'ըսուի, հողատէրերը կամ հողաձեւակները  
վճարելու են տուրքը: Հանրային կամ տեղային  
կառավարութեան պահպանման համար հարկ եղած  
բոլոր տուրքը հողէն գանձուելու է, կ'ըսեն, վասն զի  
զայն գործածողները կը քաղեն իրապէս համայնքին  
պատկանածին օգուտները: Այս տեսութիւնը ճշ-  
մարտանման կը թուի, բայց ծանրանիրաւութեան  
կ'առաջնորդէ: Օրինակի համար, ըսինք թէ անա-  
ռակ որդին, փոխանակ իր ունեցածը զեղիտութեամբ  
վատնելու, առեւտրական գործի ձեռնարկած և յա-  
ջողած ըլլար: Տուրք պիտի չվճարէր այն ժամանակ  
հայրական ստացուածէն իրեն ինկած բաժնին հա-  
մար, մինչ երէց եղբայրը, որ հողը կը պահէր, ամ-  
բողջին համար պիտի վճարէր: Արժեթուղթ և գոր-  
ծարան ժառանգող մարդը հարստութիւն պիտի  
ունենար, որու համար տուրք պիտի չվճարէր,  
մինչ հող ժառանգողը ծանր տուրքի պիտի են-  
թարկուէր: Եթէ զէպի ետ այն օրերը երթայինք,  
երբ աշխարհի հողը զեռ չէր բաժնուած, կրնայինք  
այսպիսի օրէնք մը հաստատել, բայց ոչ հիմա: Այդ  
պարագային անգամ չենք կարծեր թէ արդար տնօ-  
րինութիւն մը պիտի ըլլար: Մէկը գործարան մը  
կը շինէ, Բնութիւնը կը հայթայթէ քարահանքերը  
և անտառները որոնցմէ կ'առնուի անոր ատաղձը, և  
մարդ իր աշխատութեամբ կամ վարձով գործող-  
ներու աշխատութեամբ կը ձեւակերպէ իր գոր-  
ծարանը: Նմանապէս Բնութիւնը տուաւ հողը հու-  
ղագործին, սակայն վերջինը իր անձնական աշխա-  
տութեամբ կամ իր վարձկաններուն աշխատու-  
թեամբ արգասաւորեց զայն, տնկաւորեց և հունձքը  
քաղեց: Եւ թէեւ հողագործութիւնը բոլոր գոր-  
ծերուն ամէնէն հիմնականն է, առանց որու չկըր-  
նար համայնքը իր գոյութիւնը պահել, շատ երկիր-  
ներու մէջ՝ զիւրացի երիտասարդներ միտեալ են  
իրենց քնավայրը լքել և ուրիշ գործ մը փնտնել  
քաղաքներու մէջ: Կառավարութիւնը պարտի երկ-  
րագործութիւնը աւելի հրապուրիչ ընծայել և ոչ  
թէ ծանր տուրքերով զայն բեռնաւորել, Հողը հա-  
մարժէք ուրիշ ստացուածէ աւելի տուրք վճա-  
րելու չէ: Կերպով մը, ուրիշ ստացուածներու հետ  
բաղդատմամբ, կառավարական աւելի քիչ պաշտ-  
պանութեան կը կարօտի այն: Գողը չկրնար յա-  
փըշտակել զայն, և կրակը չկրնար փծաղնել զայն:  
Ուրիշ կերպ մը որով ընկերվարական զարգա-  
ւորը կրնայ հողի նկատմամբ կիրարկուել՝ հողը



դնել է համայնքին տրամադրութեան տակ, որպէս զի համայնքը իւրաքանչիւր ընտանիքի տայ իր բաժինը: Այս դրութիւնը կը կիրառուի Ռուսական գիւղերու մէջ: Միքին, այսինքն գիւղային համայնքին, ձեռքն է ամբողջ հողը, և արդիւնքը բնաւ յանձնարարելի չընծայեր դրութիւնը: Մէկը որ գիտէ թէ հողը զոր այս տարի կը մշակէ՝ կրնայ դաւ տարի ուրիշի մը յանձնուիլ, բնականաբար տրամադիր չըլլար տեւական բարւոքում ի գործ դնել, այլ կը ջանայ լոկ քաղել ինչ օգուտ որ կարելի է քաղել հողէն:

Հողէ գատ արժէքաւոր ուրիշ բնական բաներ կան, ինչպէս հանքեր և անտառներ: Ուր որ ասոնք կառավարութեան սեփականութիւն կը համարուին և հանրային օգտին համար կը շահագործուին, հանրային սեփականութեան այդ ձևին ոչ ոք պարտի առարկել: Կառավարութիւնն ալ, եթէ իմաստուն է, իր ծախքով կը շահագործէ հանքերը կամ անտառները, կամ ուրիշներ կ'արտօնէ գանձը շահագործել մասնաւոր պայմանաժամով և հանրութեան ամէնէն օգտակար համարուող որոշ պայմաններով: Հիմա առ հասարակ ընդունուած սկզբունք է թէ կառավարութիւնը կառավարեալներուն օգտին համար է, կառավարութիւնը միապետական ըլլայ թէ հանրապետական: Եւ կառավարութեան կողմէ անտարակոյս յաճախ ի նկատ առնուող խնդիր մը սա է թէ ինչպէս անտեսելու է կառավարական ստացուածք որ ժողովուրդը ամէնէն աւելի նպաստաւորուի: Չէինք կրնար այս խնդիրը չյարուցանել, երբ էրզրում գացինք քանի մը տարի առաջ: Տեսանք որ բեռներով կոճղ կը բերուէր քաղաքը և կ'ըսուէր թէ վառելանիւթը շատ նուազ ու շատ սուղ էր Օսմ. պետութեան այդ ցրտագոյն մասին մէջ: Եւ իմացանք թէ անխահանք մը կայ քաղաքին մօտ: Արդ շատ կարելի է որ մասնագէտներ գիտեն թէ հանքածուխին քանակութիւնը շատ չէ, կամ տեսակը շատ վար է և չարժեր հանքը բանեցնել: Սակայն եթէ հանքածուխը աղէկ և բաւական առատ է, ինչո՞ւ չօգտուի ժողովուրդը, և անշուշտ բանաւոր է յուսալ թէ, մինչև որ սպառի այն, էրզրում երկաթուղիով պիտի կազուի արտաքին աշխարհի հետ և այն ատեն կարելի պիտի ըլլայ առանց շատ մեծ ծախքի վառելանիւթ բերել: Միքիլի է յուսալ թէ կառավարութիւնը շուտով, պատերազմի ծախքերէն ու հոգիքէն ազատուած, պիտի կարողանայ ոչ միայն ամենայն իմաստութեամբ գործածել զըտնուած հանրային ստացուածները, այլև աւելցնել զանոնք անտառներ տնկելով ու պաշտպանելով Ա-

նտոլուի ներքին գաւառներու բաղմաթիւ անբեր լեռներէն ումանց վրայ:

Հանրային կարգ մը սպասարկութիւններ ալ կառավարութեան ձեռքն են, և ընկերվարականներ կը պահանջեն որ ատոնց թիւը աւելնայ: Թեղթատարական վարչութիւնը ամէն տեղ կառավարութեան ձեռքն է, նմանապէս հեռագրականը շատ երկիրներու մէջ, թէև Ամերիկայի մէջ ուրոյն ընկերութիւններ կը վարեն զայն: Հանրութիւնը կրնայ յուսալ թէ այդ սպասարկութիւնը աւելի լաւ կը կատարուի և աւելի քիչ ծախքով, եթէ կառավարութիւնն ստանձնէ զայն: Երարներու առաքման թղթատարական դրութիւնը որ վերջերս սկսաւ Թուրքիոյ մէջ՝ հանրօգուտ մեծ ձեռնարկ է: Ամերիկայի մէջ այդ ալ ուրոյն ընկերութիւններու ձեռքն է որ հարուստ են և քաղաքական մեծ ազդեցութիւն ունին և մինչև ցարդ յաջողած են արգելք ըլլալ ծրարի թղթատարութեան նպաստաւոր օրէնքի մը հաստատման: Միքիլի է յուսալ թէ պիտի չյաջողին շատ ժամանակ եւս արգելք ըլլալ այդ բարենորոգման:

Կարծիքի աւելի մեծ անհամաձայնութիւն կայ երկաթուղիներու կառավարական սեփականութեան հարցին վրայ: Թերեւս երկրի մը համար ամէնէն լաւ եղող դրութիւն մը ուրիշի մը համար ամենալաւ չէ: Յամաքային Եւրոպայի երկիրներէն շատին մէջ կառավարական սեփականութիւն են երկաթուղիներէն ումանք կամ ամէնը: Ֆրանսայի մէջ միտում կայ կառավարութեան ի հաշիւ գնելու այն գիծերը որ դեռ ուրոյն ընկերութիւններու կը պատկանին և վախ կայ թէ անոնց պետականացումը, որու հետեւանքով հարկ պիտի ըլլայ հազարաւոր պաշտօնեաներ գործածել, քաղաքական վնասակար արդիւնք պիտի տայ: Թուրքիա բարեբախտ է որ հիմա իր երկաթուղիները մասնաւոր ընկերութիւններու ձեռամբ կը շահագործուին, բայց ժամանակի մը համար միայն, և մինչև որ այդ պայմանաժամը լրանայ, պիտի կրնայ որոշել թէ ո՞ր դրութիւնը ամէնէն աւելի նպաստաւոր է հանրութեան համար:

Այս նոյն խնդիրը գոյութիւն ունի նաեւ հանրակառքերու, օդային կազով կամ երկկարկանութեամբ լուսաւորման և հանրային ուրիշ պէտքերու հայթայթման նկատմամբ: Եւ առանց ընկերվարականներ ըլլալու կրնանք ընկերվարական բարեկամներու միանալ և ատոնցմէ՝ ոմանց վարչութիւնը պետական իշխանութեան վստահել:





### ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒ ԵՐԳՐ

«Երկնից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք, ու երկրիս վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն :» Դուգ. Բ. 14 :

Ծնունդ է :

Եկեղեցիի զանգակներուն ղողանջները աշխարհի կ'աւետեն Փրկչին ծնունդը :

Ու եկեղեցիի կամարները արձագանգը կ'ըլլան այն անուշ և սիրահմայ երգին զոր դարեր առաջ երգած էին Բեթլեհէմի վճիտ երկինքին վրայ թեւածող երկնառաք հրեշտակներ . «Երկնից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք, ու երկրիս վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն :»

Հրեշտակներու այս երգը կանչուած է ըլլալ նաև մարդկութեան երգը :

Մարդկութիւնը քանի մօտէն գիտնայ Ծնունդին նշանակութիւնը, և քանի որոշ տեսնէ Բեթլեհէմի մանուկին կատարել կանչուած դերը, այնքան աւելի սրտանց իր ձայնը պիտի խառնէ հրեշտակներու ձայնին ու երգէ . «Երկնից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք, ու երկրիս վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն :»

Ի՞նչ է ուրեմն Ծնունդը . ի՞նչ է կատարելիք դերը՝ Բեթլեհէմի նորածին Մանուկին :

Ձայս տեսնել կարենալու համար հետեւինք նոյն իսկ հրեշտակներու երգին որուն իւրաքանչիւր մասը լոյս մը ունի սփռելիք Ծնունդի վրայ :

«Երկնից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք :»

Հրաշալի երգին այս մասը կը վերաբրէ Յիսուսի ծնունդին ունեցած առնչութիւնը Աստուծոյ հետ :

«Երկնից» բառը կը պակսի բնագրին մէջ : Ուստի բնագրին համեմատ երկու իմաստով կըրնայ անուելլ այս մասը . բարձրութեան մէջ բնակող Աստուծոյ փառք, կամ Աստուծոյ ըլլայ ամենաբարձր փառքը : Ո՛ր իմաստով ալ որ անուելլ այս մասը կու գայ ցոյց ապլ թէ Բեթլեհէմի նորածինը արտայայտութիւնն է Աստուծոյ փառքին : Հրեշտակներ իրենց երգով չէին դար բան մը աւելցնել Աստուծոյ փառքին վրայ, այլ՝ կու գային միայն յայտնել Աստուծոյ այն մեծ փառքը որ ցոլացած կը տեսնէին Յիսուս մանուկին ծնունդին մէջ :

Հրեշտակներ՝ Աստուծոյ զանգին սպասարկու այդ անբիծ հոգիները՝ Ամենակարողին ներկայութեանը երգած էին Անոր փառքը անսկիզբ դարերէ հետէ : Երբ դեռ երկրի վրայ կեանքի նշոյլն իսկ չկար՝ անոնք Աստուծոյ անեղծ փառքին երգիչները

եղած էին : Ու երբ Աստուած երկրի հիմերը կը դնէր, ու զայն տակաւ կը զարդարէր գեղեցկութիւններով՝ հրեշտակներ էին որ Անոր այդ անշուր հրաշալիքներուն առջեւ ապշահար կ'երգէին Անոր փառքը :

Սակայն այս անգամ հրեշտակներ աւելի մեծ և աւելի զարմանալի հրաշալիքի մը առջեւ կը գլտնուէին : Աստուած ինքն էր որ այցելութեան ելած էր աշխարհ՝ մոլորածը փնտոելու և կարսուածը դտնելու համար :

Ի՞նչ խորհուրդ մեծասքանչ :

Աստուած մարդացած :

Ստեղծագործութիւնը արտափայլումն էր Աստուծոյ զրոյթն և իմաստութեան : Իսկ մարդեղութիւնը մարմնացումը՝ Անոր գործն ու սիրոյն :

Յիսուս մանուկը պատկերացումն էր Աստուծային նկարագրին, և ուստի Անոր փառքին : Անոր համար հրեշտակներ այս անգամ աւելի մեծ եռանդով կ'երգէին, «Երկնից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք :»

Ուրեմն աստեղադարդ երկինքին մէջ Աստուծոյ փառքը տեսնողներ՝ թող զան մօտենան այս Մանուկին, ու պիտի տեսնեն այդ փառքը աւելի որոշ և աւելի մեկին : Ամէն անոնք որ երկրի վրայ Աստուծոյ ձեռքերուն զարմանահրաշ գործերը կը նշմարեն՝ թող զան կանգ առնեն անգամ մը այս նորածինին առջեւ, ու պիտի գտնեն որ ան Աստուծոյ չէ թէ ձեռքերուն, այլ՝ աջ բազուկին գործերը կը պատմէ :

«Ու երկրիս վրայ խաղաղութիւն :»

Երգին այս մասը կը մատնանչէ Յիսուսի ծնունդին առնչութիւնը ազգերու յարաբերական կեանքին հետ :

Խաղաղութիւն : Ի՞նչ քաղցր կը հնչէ աս մարդկային ականջներու . կը դպչի մարդոց սիրտերուն է՛ն փափուկ և զգայնիկ թելերուն :

Մարդկութեան կարօտութիւնն է խաղաղութիւնը : Աշխարհ երբ կարօտած չէ խաղաղութեան եւ ահա շուրջ տասնեւինը դարեր առաջ Յուդայի Բեթլեհէմին վերեւ երկնայիններու քաղցր երգովը կ'աւետուէր աշխարհի թէ իր կարօտութեանը գոհացումը տրուած է . իր խաղաղութիւնը եկած է :

Մտերին մէջ պառկած նորածինը եկած էր երկրի խաղաղութիւնը ըլլալ : Այնպէս ալ եղաւ : Յիսուսով խաղաղութիւնը մտաւ երկիր :

Արդարեւ սա անցնող տասնեւինը դարերու շրջանին մէջ խաղաղութիւնը իրագործուած չէ իր կատարելութեանը մէջ : Բայց այդ չնշանակեր թէ



խաղաղութեան ի նպաստ երբեք բան մը եղած չէ : Եղած է , ու շատ բան եղած է : Եւ Յիսուս կը մնայ միակ ազգակը խաղաղութեան . այն անդիմադրելի ուժը որ կը մղէ երկրի ազգերը դէպի խաղաղութիւն : Ասոր ապացոյց : Անիրաւութիւններու , զրկումներու և պատերազմներու դէմ բարձրացած ամենաազգու բողոքները՝ բողոքները չէ՞ն Բեթլեհէմի մանուկին ու անոր կրօնքին պատրաստած ազնիւ կեանքերուն : Յիսուս մանուկէն ներշնչուածներ միայն չէին որ սուղ զինով խաղաղութիւնը ապահովեցին դարերու տառապեալ միլիոնաւոր գերիներուն : Այսօր արդարեւ պատերազմական անարկու զէնքերը յաջորդած են նախկին նիզակներուն ու տէգերուն , բայց չէ՞ որ այսօրուան նորահար զէնքերն իսկ աւելի ոչ թէ կեանքեր հնձելու , այլ՝ պահելու , ոչ թէ խաղաղութիւնը խանգարելու , այլ՝ պաշտպանելու համար են : Ու ո՞վ կատարեց այս փոփոխութիւնը : Ո՞վ ազգերու համայնակու տենչանքին այսպէս չափ ու սահման դրաւ : Չէ՞ որ Բեթլեհէմի մանուկը :

Պիտի գայ այն օրհնեալ օրը երբ աշխարհ պիտի տեսնէ իր տառապանքին վերջացումը խաղաղութեան իրականացումով : Խաղաղութեան դեսպանախորհուրդը արշալոյսն է այն փառաւոր օրուան որ պիտի ծագի Յիսուսով , երբ ազգեր իրենց երգը պիտի խառնեն հրեշտակներու երգին , «Երկրիս վրայ խաղաղութիւն» :

«Մարդոց մէջ հաճութիւն»  
 Հրեշտակներու երգին այս վերջին մասը կը շեշտէ Յիսուսի ծնունդին անհնազանդական կեանքին հետ :

Մարդուն մէջ հաճութիւն առաջ կու գայ իր փափաքներուն և բաղձանքներուն գոհացումով :

Յիսուս կու գայ մարդոց մէջ հաճութիւն , ու տեական հաճութիւն ձգել՝ գոհացնելով անոնց ներքին կարօտութիւնները :

Մարդիկ կը փափաքին տեսնել զԱստուած : Ասիկա բնութիւն փափաք մըն է : Ու կրօնքներու ծագումն ու գոյութիւնը դայս կը շեշտէ :

Եւ անա Յիսուս կ'ըսէ , «Ան որ զիս տեսաւ Հայրը տեսաւ» Յիսուս Աստուծոյ պատկերն է : Աստուածայայտութիւնն է , Բեթլեհէմի մանուկին մէջ է որ եկած է Աստուած բնակիլ , մարմնի մէջ իր բնակութիւնը կարելի եղած ամենամեծ չափով :

Ուստի նայէ Յիսուսի , ու պիտի տեսնես զԱստուած . նայէ Յիսուսի , ու պիտի ճանչնաս զԱստուած . շօշափէ զայն , ու պիտի զգաս զԱստուած : Քանզի անոր ծնունդը , կեանքը ու մահը՝ Աստուծոյ ծնունդը , կեանքը ու մահն են :

Բայց մարդոց ամենամեծ կարօտութիւնը միայն այս չէ : Մարդ մեղքերու ծանր լուծին տակ կը ճընչուի . պէտք է ազատի այդ լուծէն : Արթնցած և իր վիճակին գիտակից մեղաւորի մը վիճակը ինչ դառն է , մինչեւ որ զգայ թէ իր մեղքերը ներուած են իրեն : Ու այս՝ Յիսուսով միայն կարելի է : Անոնք որ եկած են Յիսուսի մօտ՝ զգացած են իրենց թեթեւացումը ու գտած են իրենց մէջ երկնառաք հաճութիւն :

Եւ անա իրենց մեղքերէն ազատուած կեանքերու երգն է փորձառական . «Հաճութիւն մարդոց մէջ» :

Ահաւասիկ թէ ինչ կ'ըսէ հրեշտակներու երգը ծնունդի նկատմամբ : Թող մեր ալ երգը ըլլայ այսուհետեւ . «Երկրից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք , ու երկրիս վրայ խաղաղութիւն , մարդոց մէջ հաճութիւն» :

Ռոտոսթօ Ս. Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՈՐԷՆ ԾՆԱԾ ՄԱՐԴԻԿԸ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ  
 Դարչի «շաբա» պարմութիւն մը

1909ի աշունին Թիէնձինի Ե. Բ. Ընկերակցութիւնը որոշեց գումարել ժողով մը հանգանակելու համար 42,000 թաէլ , որով պիտի գնուէր գետին մը ու անոր վրայ պիտի շինուէր Ընկերութեան յատուկ նոր շէնք մը : Այս դրամը ապահովուկերպերուն վրայ խորհելու առիթով Ընկերութեան Վարչական Ժողովը որոշեց որ նախ 25,000 թաէլի մեծ նուէր մը ձեռք անցնելու համար պէտք էր աշխատիլ ու յետոյ ալ 1,000, 500, 100 ու աւելի պակաս թաէլի պղտիկ նուէրներ : Այն ատեն գաղափար իսկ չուէինք թէ Թիէնձինի մէջ պիտի գտնուէր մարդ մը որ այդչափ խոշոր նուէր մը ընելու պիտի յօժարէր : Որովհետեւ հոն դրամապէս հարուստ Գրիստոնեաներ չկան : Շատ աղօթքներ եղան որ Աստուած ժողովուրդին մէջէն կամ դուրսէն այդպիսի նուէր մը ընելու յօժար մէկը յարուցանէ : Որոշեցինք չորս շաբաթի չափ տեւող հանգանակութիւն մը բանալ :

Այս հանգանակութեան բացուելէն քիչ մը առաջ քաղաքին կրթական մեծ գործիչներէն մէկը եղող Մր. Չանկէ , որ դեռ այն ատենները Գրիստոնեայ եղած էր , իմացանք թէ Մր. Ու Եանկ աւանդով մէկը կար , որ կը կարծուէր թէ ասանկ մեծ նպատակի մը համար առատաձեռնութեամբ տալու պատրաստ է : Ընդգ այդ ատենները Մր. Ու Եանկ մարդ դրկած էր Մր. Չանկի անոր Գրիստոնեայ ըլլալուն պատճառները իմանալու համար : Բոլոր քաղաքը աղդուած էր դարձին պատճառով Մր.



Չանկի, որ ինչպէս ըսինք կրթական կարեւոր գործիչ մըն էր և կրօնքի ալ շատ քիչ կարեւորութիւն կու տար : Մ. Չանկ Մ. Ու Եանկի հրաւերը ընդունեց և շաբաթ օրուան ամբողջ յետմիջօրէ մը տուաւ՝ անոր բացատրելու համար այն պատճառները, որոնց միջոցաւ առաջնորդուած էր Գրիստոսի հաւատալու :

Իրիկունը ծանուցուեցաւ թէ Տր. Չէփմէն և Մր. Ալէքզանտր Ե. Ք. Ընկերակցութեան մէկ ժողովին պիտի առաջնորդէին Թիէնձինի մէջ : Մր. Չանկ Մ. Ու Եանկի ալ հրաւիրեց այս ժողովին ներկայ գրանուելու համար, ու ան ալ ընդունեց : Այդ ժողովին մէջ յիտունէ աւելի երիտասարդներ հրապարակաւ իրենց փափաքը յայտնեցին զԳրիստոս իբրև իրենց Փրկիչը ընդունելու համար : Այս Մր. Ու Եանկի վրայ խորապէս ազդեց և առաջնորդեց զայն խնդրել Մր. Չանկէ որ հաճի յաջորդ օրը իրեն հետ անցնել, Գրիստոնէութիւնը աւելի բացատրելով իրեն : Ան այս առիթով հրապարակալին խոստովանութիւն մը ընել չուզեց, բայց Գրիստոսը իբրև իր Փրկիչը ընդունեց : Այս դարձի ատենն էր որ Ե. Ք. Ընկերակցութեան հանգանակելու զած գումարին մասին կը խօսուէր և Մր. Ու Եանկ այդ նպատակին համար 15,000 թաէլ նուիրել ուզեց : Այդ ատենները այն Ընկերութեան քարտուղարներէն ոչ մէկուն հետ տեսնուած էր, բայց ի Տր. Չէփմէնէ և Մր. Ալէքզանտրէ, որոնց հետ այդ ժողովին առիթով հազիւ քանի մը ըրալէի կարճ տեսակցութիւն մը ունեցած էր :

Մէկ երկու օր ետքը, Ընկերութեան միւս անդամներէն մէկուն հետ խօսակցութեան մը պահուն ան խոստացաւ 5,000 թաէլ եւս տալ շէնքին ծախքերուն ի նպաստ : Ընկերութեան այս երկու քարտուղարները, այդ միւս անդամներէն եղելութիւնը լսելով, անոր գացին տուած նուէրներուն համար շնորհակալութիւն յայտնելու նպատակով : Ան իբրև շատ քիչ քանի մը վրայ խօսեցաւ իր նուէրին մասին, և Չինու համար աւելի մեծ ծառայութիւն մը մատուցանելու իր փափաքը յայտնեց : Ըսաւ թէ մանկութենէն ի վեր ճշմարտութիւնը կը փնտռէր, և սորված բոլոր բաները փորձած էր, բայց վերջապէս համոզուած էր թէ Չինու միակ յոյսը Գրիստոնէութեան մէջ էր : Խոստովանեցաւ նաեւ իր Գրիստոնէութիւնը ընդունիլը, բայց դեռ հրապարակային խոստովանութիւն մը ընելու անկարող ըլլալը :

Բայց այս մեծ նուիրատուութիւնը զայն իբրև Գրիստոնէութեան բարեկամ շատ աւելի ծանօթացուց հասարակութեան մէջ և ծաղր ու հալածանք

հրաւիրեց անոր վրայ, բայց ատոնք ա'լ աւելի օգնեցին անոր իր հաւատքին մէջ հաստատուելու : 1910ի Յունիստին սկիզբը Երէց Տինկ Լի Մէ, որ քանի մը ամիսներ ժողովներու կ'առաջնորդէր Մանչուրիայի ու Հիւսիսային Չինաստանի գոյնձներուն մէջ և շատ դոնացուցիչ արդիւնքներ յառաջ կը բերէր, Թիէնձին եկաւ միտինարական և կառավարական վարժարաններու ուսանողներուն մէջ հոգեւոր ժողովներ ընելու համար : Շատեր կ'աղօթէին որ նշանաւոր այդ Երէցին այցելութիւնը Մր. Ու Եանկի զԳրիստոս իրեն Փրկիչ ընդունելուն հրապարակային խոստովանութեան արդիւնքով ալ պսակուէր : Մր. Ու Եանկ այս ժողովներէն ոչ մէկուն կրցաւ ներկայ գտնուիլ, բայց ի կիրակի յետմիջօրէի մը ատեն տեղի ունեցած մէկէն : Այս ժողովին վերջանալու ատենը Երէց Տինկ, Մր. Ու Եանկ և Ամերիկեան Մեթոտական, Անգղիական Մեթոտական և Ե. Ք. Ընկերակցութեան երէցները ճաշի հրաւիրուած էին : Երբ անոնք ճաշի հրաւիրուած տեղերնին կ'երթային Մր. Ու Եանկի կառքով, Ընկերակցութեան քարտուղարը հարցուց Մր. Ու Եանկի թէ ինչո՞ւ զԳրիստոս հրապարակաւ չէր դաւաներ ու չէր մկրտուեր : Ան պատասխանեց, «Ինչո՞ւ այս իրիկուն չմկրտուիմ» Երէցները անոր բացատրեցին թէ սովորութիւն եղած էր Գրիստոնեայ ըլլալ ու զոյները մկրտելէ առաջ փորձի չըջան մը սահմանել : Մր. Ու Եանկ պատասխանեց թէ ինք իր առաջին որոշումը տասնըվեց տարի առաջ ըրած էր՝ Շանկայի մէջ Տր. Չ. Երնկ Ալէնի ջանքերուն արդիւնքով, բայց այդ տարիներու ընթացքին իր հարցառութիւն զիջելու և համբաւ չի ներու բաղձանքները զինքը մոլորցուցած էին ու չէր կրցած իր որոշումը ի գործ դնել :

Ի՞նչ մը վիճարանութենէ ետքը երէցներէն մէկը ըսաւ թէ ինք կը խորհի թէ Մր. Ու Եանկ կրնայ այդ իրիկուն իսկ մկրտուիլ, և թէ շատ ալ յարմար պիտի ըլլար, որովհետեւ Միութեան ժողովի մը ատենն էր, զոր միտինարները պիտի գումարէին Թիէնձինի մէջ, և այդ կերպով Մր. Ու Եանկ այդ բոլոր միտինարութիւններուն ներկայացուցած եկեղեցիներուն առջեւ պիտի մկրտուէր : Այդ համազումար ժողովին մէջ ներկայ էին Մեթոտական Եպիսկոպոսական Եկեղեցիին, Անգղիական Մեթոտական Եկեղեցիին Չինացի երէցները, ինչպէս նաեւ երէցները Լոնտոնեան Միտինարութեան, որ ձեռով ժողովական է, և Ամերիկեան Պորտի Միտինարութեան երէցները, ներկայ էին նաեւ Երէց Տինկ և Ե. Ք. Ընկերակցութեան քարտուղարը, ու



րոնք Երիցական էին, Երէցներէն մէկը խնդիր ըրաւ թէ, եթէ Մր. Ու Եանկ այդ ժողովին առջև մկրտուէր, ո՛ր եկեղեցիին կամ միսիօնարութեան անդամ պիտի նկատուէր : Պատասխանուեցաւ թէ ամէնուն, այսինքն ամէնուն ալ հաւասարապէս օգնելու հասկացողութեամբ . բայց աւելի վիճաբանելով տեսան թէ եկեղեցական ներկայ կազմակերպութեան համեմատ ան պէտք էր եկեղեցիներէն մէկուն միանար : Որոշուեցաւ թէ քանի որ ան բոլոր եկեղեցիներուն պիտի օգնէր, կրնար անդամը նկատուիլ այն եկեղեցիին, որուն շէնքերէն մէկուն մէջ պիտի մկրտուէր : Վարդապետական, կամ մկրտութեան ձեւի կամ եկեղեցական կազմակերպութեան մասին խօսք չեղաւ : Երէց Տինկ զայն մկրտեց այդ իրիկուն ու ան անդամը եղաւ Լոնտոնեան Միսիօնարութեան, որովհետեւ այդ միսիօնարութեան վերաբերող Անկլիկնական գովէճին մատուոթն մէջ մկրտուեցաւ :

Մր. Ու Եանկ շարաթ մը ետքը Ե. Բ. Ընկերակցութեան ուսանողական երրորդ տարեկան ժողովին ներկայ գտնուեցաւ : Ժողովին մէջ զօրաւոր վկայութիւն մը տուաւ իր զԲրիտոսոս դաւանելուն համար, և զինքը դարձի առաջնորդող ազդեցութեան պատմութիւնը ըրաւ :

Մր. Ու Եանկ Թիէնձիինի Չինացի առեւտրականներուն առաջիններէն մէկն է, վարիչն է ճարտարապետական ընկերութեան մը, որ Թիէնձիինի նոր քաղաքին մէջ հարիւրաւոր տուներու շինութեան գործն ստանձնած է : Բաւական մեծահարուստ մարդ մըն է, Թաօթախի աստիճանը ունի, և Հիւսիսային Չինաստանի մէջ Բրիտոնէութիւնը ընդունողներուն թերեւս ամէնէն ազդեցիկներէն մէկն է : Շատ ազնիւ, խոնարձ մարդ մըն է, և կարծես իր բարձր դիրքին պատիւին նախանձախնդիր մէկը չէ : Գովեստ ալ չսպասեր իր նուիրատուութեան համար, որ մինչեւ հիմա Չինացիի մը կողմէ Բրիտոնէական գործի համար եղած ամէնէն մեծ նուիրատուութիւնն է :

**ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ**

ԲՈՒՆԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԻՒԹԻՆ ՄԷՋ

Նորածինի և մանկական տարիքի մէջ գտնուողի համար քունի կարեւորութիւնը անուրանալի է : Այդ տարիքին քունը այնչափ կարեւոր է որ նորածինը օրուան քսանըջորս ժամուան քսանէ մինչեւ քսանը-երկուքը հանդարտ ու աներազ քունի մէջ պէտք է անցնէ — այս գործնականապէս անոր սնուցման ու պարզ զգեցումի ու լողանքի ժամանակէն դատ բոլոր ժամանակը կը նշանակէ : Վեց ամսու հա-

սակէն մինչեւ մէկ տարեկանը մանուկը օրական առնուազն տասներկու ժամ քնանալու է : Երկրորդ տարուան մէջ տասներկու ժամ, իսկ երրորդ և չորրորդ տարիներուն մէջ տասներեք կամ տասնը-չորս ժամ քուն քնանալու պէտք ունի :

Մանուկ մը անկողինի մը մէջ մինակը պառկելու է : Երբ մայրն ու մանուկը միասին մէկ անկողնի մէջ պառկին, երկուքն ալ չեն ունենար այն հանգիստը որուն պէտք ունին :

Մանուկներու անքնութեան ու անհանդարտութեան գլխաւոր պատճառը անմարսողութիւնն է, որ անյարմար կերակուրներու, անկանոն կամ չափէն աւելի կերցնելու արդիւնք է : Եթէ մանուկ մը շատ ճգայ, անհանդարտ է, անքուն է, շատ յարմար է որ կերակուրի խնդիրը ուշադրութեան առնուի :

Մանուկները քնանալէ առաջ օրրելու սովորութեան ինպատ ըսելիք շատ բան չկայ : Մանուկը գրկած սենեակին մէջ պտըտիլ, քուն բերելու համար երգել, ու արթնցած կամ լացած ատեն միշտ անկողինէն հանել յաճախ անքնութեան ու լալկանութեան սովորութեան կը տանին : Շատ պղտիկ մանուկներ իսկ շուտով կրնան սորվիլ ուշադրութիւն հրաւիրել իրենց վրայ :

Անքնութեան ուրիշ պատճառ մը, զոր յաճախ բնաւ նկատողութեան չենք առներ, սենեակին մէջ շատ զօրաւոր լոյս ունենալն է : Մութի մէջ քնանալ բնական է, և մասնաւորապէս փափաքելի է որ մանուկներ ալ վարժուին մութի մէջ քնանալու, որովհետեւ անոնք շատ զգայուն են ամէն տեսակ տպաւորութիւններու և ազդեցութիւններու հանդէպ : Անոնց փափուկ աչքը և ուղեղը պէտք ունին այն կատարեալ հանգիստին զոր մութին մէջ կրնան գտնել :

Գարնան և ամառուան ատեն, երբ արեւը ժամը հինգէն առաջ կը ծագի, մանուկները անպատճառ կ'արթննան եթէ սենեակը բաւականաչափ մութ չէ : Կան սեւ ներկուած մասնաւոր վարագոյրներ, որոնք թէ՛ ներսը պէտք եղածին չափ թարմ օդի մտնելուն յարմար են, թէ՛ ալ դուրսի զօրաւոր լոյսը ներս մտնելէ կ'արգիլեն :

Երբ մանուկները չորս հինգ տարեկան ըլլան, օրական սովորական քուններին յաճախ անկանոն կ'ըլլայ ու այդ տարիքէն մինչեւ տասներկու տարեկան հասակին բաւականաչափ քուն չունենալու ենթակայ են : Գանի որ այդ տարիներու ընթացքին միտքը և մարմինը արագաբար կ'աճին, և միտքը շատ գործունեայ է՝ շատ քունի պէտք կայ : Այս շրջանին քունի նուազութիւնը վատագաւոր



արդիւնքներ կրնայ տալ : Այս մասնաւորապէս ճշմարիտ է դպրոցական տղաքներու համար , որովհետեւ անոնք թէ՛ դպրոցական աշխատութեան , թէ՛ ալ մարմինի և միտքի աճումին համար ուժի պէտք ունին :

Հինգէն ինը տարեկան տղաք իրիկուան ժամը վեցուկէսէն կամ եօթնէն մինչեւ առտուան եօթը քնանալու են : Եթէ օրական երեսուն կամ քառասուն վայրկեանի կարճ մրափ մըն ալ կարելի ըլլայ աւելցնել՝ աւելի նպատակայարմար է կազդուումի համար :

Իննէն մինչեւ տասնըհինգ տարեկան տղաքն ալ առնուազն տասը ժամ քնանալու են ամէն դիւեր , և այս տարիքի տղոցմէ շատեր աւելի պիտի օգտուին դպրոցական ժամերու միջեւ դրուած դադարի պահերէն :

Որունկ քունը ընդհանրապէս աղէկ առողջութեան նշան է : Եթէ մանուկ մը շատ կուլայ ու անհանգիստ ու անքուն է գիշերները , անտարակոյս պատճառ մը ունի : Առանց անհանգստութեան պատճառը գտնելու՝ դայն դարմանելու և քնաբեր դեղեր տալու մի գիմէք : Այս տեսակ դեղերու գործածութիւնը յաճախ վտանգաւոր է , և վնասակար արդիւնքներ կու տայ :

Մանկութեան գործը մեծնալ և կեանքի ապագայ տարիներուն համար ուժ խնայել ու ամբարնել է : Այս նպատակին աղէկ իրագործուելուն համար մանուկները բաւականաչափ բացօդեայ կեանք անցընելու , նաեւ գիշերները կուշտուկուս կազդուորիչ քուն վայելելու են : Այդ գործին աղէկ կատարուելու նշանն են փայլուն աչքեր , կարմիր թուշեր ու հոգեկան զուարթ տրամադրութիւն :

ԻՐԱՊԵՍ ՀԱՄՐ

Աշխարհի մէջ դեռ մարդիկ կան որ կը կարծեն թէ ձին տեսակ մը ապրող մեքենայ է , ստեղծուած մի միայն մարդոց գործածութեան համար , և զուրկ որևէ իրեն յատուկ իրաւունքէ :

Այս անոր համար է որ ձին բառին կատարեալ առումով համր կենդանի մըն է : Եթէ շունի մը զարնեա՝ կը կաղկանձէ : Եթէ կատուի մը պոչին վրայ կոխեա՝ կը մլաւէ : Մինչդեռ ձին մեղսելու աստիճան կրնաս ծեծել , բայց պզտիկ ձայն մը իսկ չհաներ : Ան խրխնջելով իր զուարթութիւնը կ'արտայայտէ , բայց հազիւ ճղնաժամային տազնապնեւրուն ատենն է որ իր ցաւերը քիչ մը կրնայ արտայայտել , և շատ անգամներ այն ատեն իսկ շատ թերի ու տկար կերպով :

Այս սրտառուչ լուծիւնը , ձիուն իր ցաւերը

արտայայտելու այս անկարողութիւնն է որ շատ մարդոց անոր ցաւերը անգիտանալու պատճառ կը դառնայ : Անոնք երեւակայութիւն չունին , ու ան ալ արտայայտիչ ձայներ չունի ազդելու համար անոնց փթացած զգացումներուն : Եթէ ան կարենար շուներու պէս կաղկանձել , մեր քաղաքներուն փողոցներուն մէջ պիտի արձագանգէին այնպիսի սրտառուչ ձայներ , գորոնք օր մը իսկ մտիկ ընել անտանելի պիտի ըլլար մեզի համար : Մեր ձիերու հետ վարուելու կերպը պէտք է անմիջական բարեփոխութեան մը ենթարկուի տեւականապէս :

Չոր օրինակ առէք ոսկրներու յատուկ վերքերը , որոնցմէ կը տառապին շատ մը ձիեր : Այդ վերքերը շատ մը աղդեցութիւններ կը թողուն ձիուն առջեւի ոտքերուն վրայ : Ոսկորները կը փրտտին ինչպէս կը փտտին մարդկային ակոսները : Երեւակայեցէք տառապանքը ձիու մը , որ այդպիսի վերքով քալելու և աշխատելու օտիպեալ է :

Սպառանի (ձիու կարթի ուռ) քանի մը տեսակներ կան , որոնցմէ տառապող ձի մը անպատճառ կը նիհարնայ , մինչեւ անգամ երբ աղէկ խնամուի ու գործ ալ չգործէ : Այս ախտը կրնայ որոշուիլ մասնաւոր հիւժումէ մը — ծիրում մը ձիուն մէջքին կամ երանքին մօտ , ու երբեմն այնչափ զօրաւոր , որ այնպէս կ'երեւայ թէ պզտիկ թաշկինակի մը երկու ծայրերը իրարու պիտի կրնան հասնիլ երբ զիստերուն առջեւէն կապուի :

Չին թէեւ չխօսիր ու չկանչեր , բայց իր պատմութիւնը որոշապէս կը խօսի անոնց որ կրնան հասկնալ : Անոր աչքերը շատ պերճախօս են : Երբ տառապի , անոր աչքերը կը պզտիկնան , և Չղային , յուզեալ ու անհանդարտ արտայայտութիւն մը կը ներկայացնեն , արտայայտութիւն մը որ թէեւ անբացատրելի՝ բայց շատ հասկնալի է : Իսկ երբ հանգիստ է , աչքերը խոշոր խոշոր կը բացուին և հանդարտ ու խաղաղ նայուածք մը կ'ունենան , ու երբ զինքը շոյես , մեծաբաց աչքերով նայուածքներ կը նետէ որ իր զուարթ տրամադրութեան յայտարար նշանն է : Գործարաններու մասնաւոր ախտներէն վարժ մարդ մը ձիերուն աչքին նայելով կրնայ ընտրել զանոնք որ բարի ձիապան մը ունին , ինչպէս նաեւ զանոնք որ անգութ ձիապան մը ունին :

Թէ ձիուն ականջներն ալ շատ աղէկ կ'արտայայտեն անոր զգացումները՝ այդ շատ յայտնի է ու աւելի բացատրութեան անկարօտ : Երբ ձին ասկերջանիկ է , չարաչար կը գործածուի ու պէտք եղած խնամքը չտարուիլ անոր համար՝ անոր ականջներն



րը դէպ ետեւ կը ծոին թոյլ կերպով, ինչ որ յատկանշական է: Դուք կրնաք երբեմն տեսնել զայդ խեղ կենդանիներու վրայ, բայց միշտ կրնաք տեսնել չարաչար գործածուած կենդանիներու վրայ:

Ձիուն բառամթերքը շատ սահմանափակ է, բայց անոր սահմանները նոյն են մեր աննպատակայարմար բարբառին հետ. մէկ կողմէն հաճոյք, իսկ միւս կողմէն վիշտ: Անսիրտ է մէկը երբ չուզեր զայն սորվիլ, և բթամիտ՝ երբ չկրնար հասկնալ:

ԱՌԱՋԻՆ ԾՆՈՒՆԴԻ-ԾԱՌԸ  
(Վեր. Հէնրի Վան Տայտ)  
Գ.

Չորցած տերեւներ, որոնք պատռտած ու դուռնաթափ դրօշակներն են անցնող ամառուան, դեռ կը կախուէին կաղնիին ոստերէն վար: Աշնան փայլուն բոսորագոյնը շատոնց անհետացած էր, և ցուրտով ու փոթորիկներով սպիտակցած էր: Բայց այդ իրիկուն փառքի այդ մնացորդ գրգռակները, որոնք երկինքի մութ կապոյտին դէմ հին արեան բիծեր էին, նորէն կարմրած էին: Որովհետեւ ծառին առջեւ մեծ կրակ մը վառուած էր: Կարմիր բոցէ լեզուներ, կայծալից բռնկումներ կը բարձրանային դէպի ծառին ոստերն ի վեր ու զօրաւոր լուսավառութեան մը տեսքը կու տային այդ վայրին: Լուսնին մաքուր, ոսկի լոյսը, որ շուրջի անտառները կ'ոզողէր, հոս կը մարէր ու կը խաւարէր: Այդ խոշոր կաղնիին ոստերուն մէջէն անոր ոչ մէկ ճառագայթը կը սպրդէր: Կաղնի երկինքին հանդարտիկ լոյսին և վարը ճարտարող կրակի բոցերուն միջև իրբեւ ամպի սիւն մը կը կենար:

Բայց Ուինֆրիտի և իր ընկերներուն համար կրակն ալ անտեսանելի էր դեռ: Կիսաշրջանակաձեւ խուռն բաղմութիւն մը հաւաքուած էր անոր շուրջը. անոնք իրենց կոնակը դարձուցած էին բացաստանին ու երեսնին դէպի կաղնիին էր: Տեսնուածը հաղիւ այդ բաղմութեան շփոթ, անձեւ ու խորհրդաւոր ստուերանկարն էր:

Ճամբորդները պահ մը կեցան բացաստանին ծայրը և իրարու հետ խորհրդակցեցան:

«Այս անտառանակ ցեղերէն մէկուն մէկ գուժարուն է,» ըսաւ անտառանտներէն մէկը, «այս ժողովի մեծ գիշերն է: Ասոր մասին երեք օր առաջ լսած եմ երբ գիւղերուն մէջէն կ'անցնէինք: Հին աստուածներու անունով երգում ընող բոլոր մարդիկ հրաւիրուած են այս ժողովին: Անոնք երկվար մը պիտի զոհեն պատերազմի աստուծոյն, արիւնը պիտի խմեն և զօրաւոր ըլլալու համար ալ ձիւրուն միսը պիտի ուտեն: Մեր կեանքը վտանգի պիտի ենթարկենք եթէ անոնց մօտե-

նանք: Եթէ կ'ուզենք որ չմտնինք, զոնէ խաչը պահելու ենք:»

«Ես ընաւ չեմ կրնար խաչը պահել,» գոչեց Ուինֆրիտ իր ցուպը բարձրացնելով, «ես եկած եմ զայն ցուցնելու համար ու այս կոյր մարդոց անոր զօրութիւնը յայտնելու համար: Հոս այս գիշեր ձի մը զոհելէ աւելի մեծ բան մը կայ կատարուելիք, կուռքերու զոհուած միս ուտելէ աւելի մեծ ու ամօթաբեր չարիք մը կայ դարմանուելիք: Ես երազի մէջ տեսած եմ զայդ. հոս խաչը պիտի տնկուի ու ան մեր նշանաբանը պիտի ըլլայ:»

Անոր հրամանով սահնակը անտառին եզրը ձգուեցաւ ու հոն երկու պահնորդներ դրուեցան, և խուճիկն մնացեալ անդամները բացաստանին վրայ դէպ յառաջ քալեցին: Անոնք առանց ճանչցուելու մօտեցան, որովհետեւ բոլոր բաղմութիւնը մեծ ու շաղրութեամբ կը շիտէին մեծ ծառին տակ վառուած կրակը:

Յետոյ հնչեց Ուինֆրիտի ձայնը, «Բարեւ ձեզ, ով անտառի զաւակներ, օտարական մը ձեր կրակին տաքութենէն օգտուիլ կ'ուզէ ձմռան այս ցուրտ գիշերին:»

Յանկարծ ու իբր թէ մէկ շարժումով հազար ակնարկներ դարձան խօսողին վրայ: Կիսաշրջանակը լուռութեամբ մէջտեղէն բացուեցաւ: Ուինֆրիտ իր հետեւորդներով մէջը մտաւ այդ կիսաշրջանակին՝ որ նորէն զոցուեցաւ:

Նորեկները երբ բաղմութեան մէջ մտան՝ տեսան թէ ամբողջին ընդհանուր գոյնը սպիտակ էր, ոչ թէ սեւ, — փայլուն, պայծառ ու պատկառելի: Այդ մահիկաձեւ կիսաշրջանակին ծայրը խմբուած կիներու զգեստները սպիտակ էին. սպիտակ էին նաև տարագնները մարդիկներուն, որոնք կարգով շարուած էին. սպիտակ էին մուշտակէ կրկնոցները ծերերուն, որոնք կիսաշրջանակին կեղրոնական մասը կը զբաւէին. սպիտակ էին նաև արծաթեայ զարդերով պճնուած և բուրդի պէս ձերմակ պատմուճանները խուճի մը մանուկներու, որոնք կը կենային կրակին շատ մօտը. սպիտակ էին նաև դէմքերը ամէն անոնց, որ սարսափով կը նայէին այդ մանուկներուն. և այդ բոցերու զոզող փայլունութիւնը ձիւնի վրայ թափուած արիւնի գոյնին պէս կարմրութիւն մը կը ցոլացնէր այդ սպիտակին վրայ:

Այդ փայլունութենէն անմասն մնացող միակ մարդն էր ծերունի քրմապետը, Հուներատ, որ երկար ու մեռելական պատմուճան մը հագած էր, երկար մազեր ու մօրուք ունէր, նաև մահու չափ դեղնած դէմք մը, և կոնակը կրակին դարձուցած յամբաբար դէպի նորեկները եկաւ:



«Ո՛վ էք դուք. ուրկէ՞ կու գաք և հոս ի՞նչ կը փնտոէք:»

«Ես ձեր ազգակիցն եմ և կը պատկանիմ Գերման եղբայրութեան», պատասխանեց Ուինֆրիտ, «ես Անգղիայէ, ծովին անդիի կողմէն եկած եմ, ձեզի այդ երկիրէն ողջոյն բերելու, ինչպէս նաև պատգամ մը՝ ամէնուս Հօրմէն, որուն մէկ ծառան եմ:»

«Բարի եկաք ուրեմն», ըսաւ Հունրատ, «բարի եկաք, ազգակից. բայց լռեցէք, որովհետեւ ինչ որ պիտի կատարուի հոս՝ անյետաձգելի է և պէտք է կատարուի՝ լուսինը դեռ զէնիթէն չանցած. արդեօք դուն աստուածներէն նշան մը ունի՞ս ձեռքդ, հրաշք կրնաս կատարել:»

Հարցումը յանկարծակի եղաւ, իբր թէ յոյսի նշոյլ մը ցոլացած ըլլար ձեր քրմապետին միտքի թնճուկին վրայ: Բայց Ուինֆրիտի ձայնը տկարացաւ և յուսահատութեան ամպ մը իջաւ անոր դէմքին վրայ մինչ կը պատասխանէր. «Ո՛յ, ես հրաշք գործած չեմ, թէեւ լսած եմ շատ մը հրաշքներու մասին. մեր ամէնուս Հայրը իմինիս պէս ձեռքերու հրաշք գործելու կարողութիւն տուած չէ:»

«Ուրեմն հանդարտ կեցիր, դուն հասարակ մարդ», ըսաւ Հունրատ, ծաղրանքով, «եւ դիտէ թէ աստուածները մեզ ի՞նչ բան ընելու կոչած են հոս: Այս գիշերը մահուան գիշերն է Գեղեցիկն Պալտուր կոչուած արեւ-աստուածին, որ թէ՛ աստուածներու, թէ՛ ալ մարդոց սիրելի է: Այս գիշերը մթութեան ժամն ու ձմեռուան զօրութիւնն է. զոհարերութեան ու մեծ սարսափի գիշերն է: Այս գիշեր մեծն Թհոր, որոտումի և պատերազմի աստուածը, որու նուիրուած է այս կաղնին, վշտացած է Պալտուրի մահուան համար և զայրացած է իր ժողովուրդին, որովհետեւ անոնք մոռցած են անոր պաշտօն [մատուցանել: Անոր զոհարանին վրայ շատոնց զոհ չէ դրուած, և շատոնց այս նուիրական ծառին արմատները արիւնով չեն յագեցած: Ահա այս պատճառով է որ անոր տերեւները այսպէս անժամանակ չորցած են և ճիւղերը մահուան ծանրութիւնը ունին: Այո, այս պատճառով Սլավները և Ուէնտերը պատերազմի մէջ յաղթած են մեզ: Անոր համար հունձք չեղաւ, գայլերու վոհմակներ մեր փարախներուն վրայ յարձակեցան, մեր աղեղներուն ուժը պակսեցաւ ու նիզակներուն փայտը ջախջախուեցաւ և վայրի կիսնը որսորդները սպաննեց: Ահա այս պատճառով ժանտախտ եկաւ մեր գիւղին վրայ և մեր գիւղերուն մէջ մեռելները ապրողներէն բազմաթիւ են: Պատասխանեցէք ինձի, ով ժողովուրդ, բոլոր այս բաները ճշմարիտ չե՞ն:»

Բոլոր այդ շրջանակէն հաստատումի խոպոտ աղաղակ մը բարձրացաւ: Երգ մը, որուն մէջ էրիկմարդու և կիներու ձայներ իրարու կը խառնուէին, բարձրացաւ իբրև հովի ձայնը մայրիկ անտառին մէջ, կամ իբրև ջրվէժի մը գոռումը. այսպէս թէ՛ կը նուաղէր, թէ՛ կը բարձրանար:

Ով դու մեծ Թհոր, շանթերու հայր, Անոզորմ ես և մեծազօր, Խընայէ մեզ, ազէտ մի տար. Մի վերցըներ մուրճըդ հըզօր. Մի զայրանար մեզի դէմ ա՛լ, Հա՛մաճարակ մի զրկեր մեզ, Կը բերենք քեզ ահա դարձեալ ձոխ ընծաներ և ողջակէզ: Ահա արծաթ ենք քեզ բերած, Պատմուճաններ ալ մեծազին. Ահա բոլոր մեր ըստացուած, Քեզի կու տանք բոլորովին: Քեզի ոչխար պիտի զենենք, Ու երիվար զոհենք պիտի, Արիւն պիտի թափենք հոս մենք, Քեզ, Որորման Ծա՛ն վթխարի: Նոր կեանք պիտի մէջէդ վազէ, Ով դուն հըզօր ծա՛ն հրաշալի, Ով դուն կարող, մեզ ողորմէ, Բարկութիւնըդ թող հանդարտի: Խընայէ մեզ, փրկէ հըզօր, Ողորմէ մեզ, Թհոր դու, մեծ Թհոր:

Երգը երկու բարձր աղաղակներով վերջացաւ, և այնպիսի խոր լուռութիւն մը տիրապետեց որ կրակին ճարճատիւնը իսկ կը լսուէր որոշապէս: Ծեր քրմապետը լուռ կեցաւ պահ մը: Անոր թաւ յօսքերը աչքերն ի վար կը թափէին իբր մոխիրներ որ բոցերը կը մարնն: Յետոյ դէմքը վերցուց և խօսեցաւ:

«Այս բաներէն ոչ մէկը պիտի հաճեցնէ աստուածը: Զոհը, որ ձեր մեղքերը պիտի մաքրէ, աւելի թանկագին ըլլալու է, աւելի թանկագին քան այն կարմիր ցօղը որ նոր կեանք պիտի ներարկէ արիւնի ծառին: Թհոր ձեր ամենասիրելի ու ամենաազնիւ ընծան կ'ուղէ:»

Հունրատ զնաց դէպ ի խուժը մանուկներու, որոնք կրակը և օձագալար բարձրացող բոցերը կը դիտէին: Անոնք ուշադրութիւն չէին ըրած քրմապետին խօսքերուն և չէին տեսած անոր իրենց մօտենալը, անոնք կաղնիին ճիւղերէն վեր բարձրացող բոցէ օձերը դիտելու այնչափ փափաքող էին: Խուժքին սուջեւը կը կենար աղեկ մը, որ արարողութեան ուշադիր էր. ինքը արեւի ճառագ



գայթի մը չափ նուրբ ու ճապուհ կ'էր, սեւ փայլուն աչքեր ու ժպտալիր շուրթեր ունէր: Քրմայեան անոր ուսին վրայ դրաւ իր ձեռքը: Տղեկը դարձաւ ու անոր երեսը նայեցաւ:

«Ահաւասիկ,» ըսաւ ծերունին իր ճայնին տալով շատ թաւ թրթռում մը, որ անհանդարտ նաւ մը ցամաքին կապող պարանի մը թրթռումին կը նմանէր, «հաւասիկ ընտրեալը, Յեղապետին մեծ գաւակը, ժողովուրդին սիրելին: Մտիկ ըրէ Պէրնարտ, երթալ կ'ուզեմ վալհալլա, ուր ձիերը աստուածներու հետ կը բնակին, և Թհորի պատգամ տանիլ:»

Տղեկը շուտով և յստակ կերպով պատասխանեց.

Այո, քրմայեան, պիտի երթամ, եթէ հայրս հրամայէ: Եստ հեռու է: Ե՛տև վազելու եմ: Գայլերու դէմ կռուելու համար աղեղս ու նետեր ալ առնելու եմ:»

Տղուն հայրը Յեղապետ կուռտհար, որ իր մօրուսաւոր մարտիկներուն մէջ կը կայնէր, խոր հառաչ մը քաշեց ու այնչափ ծանրապէս կոթնեցաւ իր նիզակին վրայ որ փայտը կոտրեցաւ: Եւ անոր ամուսինը Իրմա, կիներու կարգերուն մէջէն յառաջ ծռելով մէկ ձեռքով իր ոսկեգոյն մազերը փետտել սկսաւ, իսկ միւսով վիզը անցուած արծաթ շղթան այնչափ ուժով քաշեց որ շղթային օղակները միսին մէջ մտան ու արիւնի կաթիլներ վազել սկսան կուրծքն ի վար:

Բաղմուտեան մէջէն ալ հառաչանք մը անցաւ, ինչպէս կ'անցնի փոթորիկի շունչը անտառին մէջէն: Բայց նորէն ալ Հունրատէ դատ ոչ ոք խօսեցաւ:

«Այո, Իշխանս, աղեղ ու նիզակ տանելու ես. որովհետեւ ճամբան երկար է, և դուն ալ քաջ որսորդ մըն ես: Բայց դուն պահ մը գոց աչքերով մութի մէջ պիտի ճամբորդես. կը վախնամ:»

«Ես ոչ մութէն, ոչ մեծ արջէն, ոչ ալ մարդազայէն կը վախնամ,» ըսաւ տղան, «որովհետեւ ես կուռտհարի, իմ ժողովուրդիս պաշտպանին, որդին եմ:»

Յետոյ քրմայեանը տղան անոր հագած ոչխարի մորթէ գդեատովը կրակին քով խոշոր ու տափարակ քարի մը վրայ տարաւ: Տուաւ անոր արծաթաղարդ աղեղը ու պողպատէ ծայրով նիզակը: Տղուն աչքերն ալ կապեց պատառով մը և հրամայեց որ քարին քով ծնրագրէ՝ երեսը դէպ արեւելքը դարձած: Այդ կիսաշրջանակածեւ բազմութիւնը անդիտակցաբար դէպ ի ներս ամփոփուեցաւ, ինչպէս կը ծռի աղեղը երբ լարը քաշուի: Ուրիշքիտ անձայն կերպով մինչեւ քրմայեանին քով յառաջացաւ:

Ծերունին դեանէն քարէ խոշոր սեւ մուրճ մը վերցնելու համար ծռեցաւ. այդ Թհոր աստուածոյն նուիրական մուրճն էր, իր տկար թեւին բոլոր ուժով մուրճը վեր օդին մէջ բարձրացուց, պահ մը կեցաւ տղեկին ծռած գլուխին վրայ — յետոյ վար իջեցնելու վրայ էր:

Կիներու կեցած տեղէն սուր ճիչմը բարձրացաւ, «Ձիս, զիս առ և ոչ թէ Պէրնարտը:»

Մօրն իր զաւակին քով խոյանալը բազէի մը սըլացքէն արագ էր, բայց փրկողին ձեռքը ա'լ աւելի արագ եղաւ:

Ուրիշքիտի հաստ ցուպը մուրճին կոթին դէմ երկարած էր՝ երբ ան վար կ'իջնար: Մուրճը ծերունիին ձեռքէն մէկդի սահեցաւ ու գնաց զարնուեցաւ զոհարանի քարին ծայրին, զոր երկուքի ձեղքեց: Սարսափի և խնդուածեան աղաղակ մը բարձրացաւ շուրջը կեցողներէն: Կաղնիին ճիւղերը զողացին. բոցերը աւելի վեր սլացան: Երբ աղաղակը դադրեցաւ, ժողովուրդը տեսաւ տիկին Իրման որ իր զաւակին փաթթուած էր, ու անկէ վեր զոհարանի քարին վրայ կը կայնէր Ուրիշքիտ, որուն դէմքը հրեշտակի մը դէմքին պէս կը փայլէր: (Շարունակելի)

### ՅՈՒՌՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ

### ԲԱԺԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆԳՂԱՆՈՒԻ  
ԿԱՆՈՆԱԳՐԻ ՄԸ ՊԵՏՔԸ

Բժիշկ մը երբ չգիտեր հաւանդի մը ցաւը, երբ հիւանդը չպատմեր մանրամասնօրէն իր վիճակը, ընականաբար չի կրնար դարմանել զայն: Վէրքի մը երեսը ծածկելով բուժում յառաջ չի գար, երբ ներքնապէս վէրքը կը շարաւանայ և փտութիւնը յառաջ կ'երթայ: Մեր Աւետ. եկեղեցիներէն շատերուն մէջ վէրքեր կան, որոնք դարմանումի կը կարօտին: Սակայն այդ վէրքերը երեւան դալու են որ ըստ այնմ դարման ալ տարուի: Այս անգամ կ'ուզեմ մատնանշել այդ վէրքերէն մի քանիները միայն, մնացածն ալ զօրութեամբ հասկնալով, և այդ վէրքերուն միակ դարմանը՝ եկեղեցական ընդհանուր կանոնադրէ մը պէտքը:

Բացայայտ է թէ եկեղեցական ընդհանուր կանոնագրի մը չգոյութիւնը ո՛րքան վնասներ կը պատճառէ մեր եկեղեցիներուն համար, հետեւաբար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր կանոնագիր մը: Ո՛վ պիտի պատրաստէ, սակայն, այդ կանոնագիրը, թերեւս լիազօրներու այն ժողովը՝ որ պիտի դուրմարուի Կ. Պոլսոյ մէջ, Բայց այդ ժողովին անդամները ո՛րքան տեղեակ պիտի ըլլան



արդեօք մեր ընդհանուր եկեղեցիներուն ցաւերուն և պէտքերուն, և երբ պէտք եղած տեղեկութիւնը պակսի անոնց քով, ինչ պիտի արժէ այն ատեն անոնց պատրաստած թերի և անկատար մէկ կանոնագիրը: Ըստ իս, լիազօրներու ժողովը կանոնագիր մը պատրաստելէ վերջ հրատարակելու և մէյմէկ օրինակ ղրկելու է իւրաքանչիւր եկեղեցիի, որպէս զի ամէնը կարենան ընել աղատօրէն իրենց ղիտողութիւնները իրենց պէտքերուն համաձայն, և յետոյ ըստ այնմ պատրաստուի վերջնական կանոնագիր մը: Ես կը խորհիմ թէ առանց եկեղեցիներու ղիտողութեան պատրաստուած կանոնագիր մը կնճոտողութիւններու պատճառ պիտի դառնայ թերեւս, և կարգ մը եկեղեցիներ պիտի մերժեն դայն. այդ պարագային լիազօրներու ժողովը կամ Կ. պօլսոյ ազգապետը պիտի կրնայ բռնի ընդունիլ տալ դայն:

Հոս ընական կու գայ ինձ հարցնել թէ երբ պիտի կազմուի լիազօրներու այդ ժողովը: Քանի մը տարիէ ի վեր լիազօրներ կ'ընտրուին միութիւններու կողմէն, սակայն կարգ մը սնոտի պատճառներով լիազօրներու այդ գումարումը կը յետաձգուի: Կ'երեւի թէ մենք ալ եւ՛շա՛լ եւ՛շա՛ղի քաղաքականութեան կը հետեւինք. բայց անդին մեր եկեղեցիները կը վնասուին, որո՞ւ հոգ: Եւ այս կը պատկերացնէ իմ մտքիս մէջ հիւանդ մը, որուն համար բժիշկի կը զիմուի. բայց բժիշկը կը դանդաղի, կը յետաձգէ, մինչեւ հիւանդը իր հոգին կը փչէ: Բժիշկը կը վազէ վերջապէս իր դեղերով և դարմաններով, սակայն ա՛լ ժամանակը անցած է: Մեր եկեղեցիները կը սպասեն կանոնագրի, կը սպասեն և կը սպասեն անհամբեր, անվերջ սպասում. կանոնագիրը եւ՛շա՛լ եւ՛շա՛ղ պիտի գայ: Թո՛ղ եկեղեցիներ կազմալուծուին, քայքայուին, ցրուին, այնուհետեւ կանոնագիրն ալ պիտի գայ:

Քանի որ ընդհանուր և միօրինակ կանոնագիր մը չկայ, հետեւաբար ամէն մարդ իր աչքին հաճօք երեւցածին պէս կ'ընէ: Ահա ասդին եկեղեցիի մը մէջ ազգապետ մը՝ որ եկեղեցիի անդամ ալ չէ, եկեղեցիին ներքին գործերուն կը միջամտէ ի վնաս եկեղեցիին: Երբ պաշտօնեան իր հրաժարականը կը մատուցանէ եկեղեցիին, եկեղեցին մեծամասնութեամբ կը ջուէարկէ չընդունիլ հրաժարականը և ետ առնել տալ դայն: Եւ սակայն ազգապետը եկեղեցիին մեծամասնութեան քուէն կը զոհէ իր քմահաճօքին: Պաշտօնեան կը մեկնի ազգապետին փափաքին համաձայն, և եկեղեցիին գուռները կը գոցուին, պաշտամունքներ կը դադրին բոլորովին, պաշտօնեայի բացակայութեան և ժողովուրդին

անհամաձայնութեան պատճառով, և այսպէս եկեղեցին կը վնասուի մեծապէս: Եւ ինչո՞ւ, վասն զի ընդհանուր կանոնագիր մը չկայ, չկան գծուած օրէնքներ եկեղեցիները անհատներու քմահաճօքներու ճիւղաններէն ազատող, չկան օրէնքներ ազգապետի մը իրաւասութեան սահմանները ընտրող: Ոչ-անդամ ազգապետ մը կրնայ խառնուիլ եկեղեցիի մը ներքին, հոգեւոր գործերուն, և ամբողջ եկեղեցիին շահը զոհել իր քմահաճօքին:

Անդին ուրիշ եկեղեցիի մը մէջ բնիկի և պանդուխտի պայքարը կը մղուի: Բնիկներ չեն ընդունիր պանդուխտներու քուէն, և անոնց անդամակցութիւնը քաղաքական ժողովի մէջ. թէեւ այդ պանդուխտներէ տմանք 20 - 25 - 30 տարիներէ ի վեր գաղթած են իրենց ընտանիքով, դործով և ամէն բանով, միայն կառավարութեան տոմարին մէջ իրենց նո՞թոսի արձանագրութիւնը փոխադրած չեն, պահած են դայն իրենց հայրենիքին մէջ: Այս պանդուխտները մասնակցած են եկեղեցիին ամէն շահերուն և վնասներուն, հոգեւոր տուրքով, եկեղեցի յաճախելով, եկեղեցիին անդամակցելով և ամէն բանով, և դարձեալ բնիկներու տեսակէտով իրաւունք չունին քուէ տալու և ընդունելու: Մինչ անդին կարգ մը ընտանիքներ ժամանակին Բողոքական արձանագրութիւն մը ունեցած են կառավարութեան տոմարին մէջ զինուորական տուրքի պատճառով, բայց երբեք Բողոքական եղած չեն, և այսօր ընաւ Բողոքական չեն, ոչ եկեղեցի կը յաճախեն և ոչ հոգեւոր տուրք կը վճարեն, ընդհակառակը Հայ եկեղեցին կը յաճախեն, հոն կը մկրտուին, կը պսակուին և կը թաղուին: Եւ սակայն եկեղեցիներու տեսակէտով այս վերջինները քուէ կրնան տալ և կու տան. մինչ 30 տարուան պանդուխտներ չեն կրնար քուէ տալ և ընդունիլ: Եւ այս պայքարներուն մէջ եկեղեցիին երկուքի կը բաժնուի, երկու տեղերու մէջ պաշտամունքներ կը կատարուին, անվերջ կոիւններ, գայթակղութիւններ և ահադին վնասներ եկեղեցիին համար: Ինչո՞ւ, վասն զի ընդհանուր կանոնագիր մը չկայ, չկան յատուկ օրէնքներ թէ որո՞նք Բողոքական են, որո՞նք կրնան քուէ տալ և ընդունիլ, նո՞թոսի արձանագրութիւնը միայն բաւական է Բողոքական ըլլալու համար: Մեր Աւետ. եկեղեցիներուն մէջ չկան բնիկ և պանդուխտ, Հրեայ և հեթանոս, տէր կամ ծառայ, այլ ամէնը մէկ են Քրիստոսով: Միւս կողմէն, յիշեալ բնիկները սկզբունք մը կը շնչանան: Ամերիկայի մէջ եկեղեցիի անդամ մը չի կրնար առանց անդամակցութեան վկայական մը ունենալու ուրիշ եկեղեցիի մը մէջ մօտե-



նալ Հաղորդութեան սեղանին : Մինչ մենք ամէն անդամ եմ ըսողը մասնակից կ'ընենք Տէրոջը սեղանին, և ասկէ երբեմն անտեղութիւններ կը պատահին խաբեբաներու պատճառով: Անդամ մը Պարսկահայ մը ինքզինքը Բողոքական կեղծելով կը ջանար խաբել զիս, որպէս զի կատարեմ իր պակը. ես մերժեցի պակել ատենց իր Բողոքականութեան և ուրիշ տեղ ամուսնացած չըլլալուն նկատմամբ գրաւոր վկայութիւն մը ունենալու: Այս մասին պէտք չկայ արդեօք յատուկ օրէնքի մը, որպէս զի խաբեբաներ չկրնան շահագործել մեր օրէնքի չգոյութիւնը:

Ուրիշ եկեղեցիի մը մէջ, տարիներ առաջ, հրաւիրուեցաւ քարոզիչ մը, և տեղին Բողոք. ուսուցիչը սկսաւ հակառակութիւն սերմանել ժողովուրդին մէջ քարոզիչին հանդէպ, որպէս զի բեմը թափուր մնալով ինք լեցնէ ամասկանի յաւելումով: Ժողովուրդը երկու մասի բաժնուեցաւ, և կոիւր տարիներով շարունակուեցաւ. քարոզիչը կը պնդէր մնալ Վերջապէս քարոզիչը պատուազուրկ ստիպուեցաւ մեկնել: Ե՛րբ վերջակէտը պիտի դուրս ուսուցիչի և քարոզիչի միջեւ տեղի ունեցած նախանձոտ հակառակութեան: Ըստ իս, ոտքերնին տրեխաւոր մարդեր արգելուելու են բեմը ելլելէ: Ինձին նուիրականութիւնը յաճախ կորսուած է կարգ մը եկեղեցիներու մէջ, և ամէն մարդ կրնայ բեմ ելլել և փչել բերնէն դուրս եկածը: Բաց աստի, կը պակսի մեր մէջ մարմին մը որ քարոզիչներու համար գործ հայթայթէ. ամէն քարոզիչ անձամբ պիտի գտնէ գործ մը, հետեւաբար քարոզիչներ, երբեմն նոյն իսկ ձեռնադրուած երէցներ, անգործ մնալով կը մատուցին վհատութեան և խեղճութեան, և կը ստիպուին իրենց օրապահիկ հանելու համար զիմել այնպիսի միջոցներու որոնք պատիւ չեն բերեր ոչ իրենց պաշտօնին և ոչ ալ Աւետ. եկեղեցիին: Ո՞վ է, սակայն, մեղադրելին: Ինչո՞ւ օր առաջ ընդհանուր կանոնագիրով մը չեն կարգադրուել յայս և ասոնց նման բոլոր հարցերը:

Մի քանի տարի առաջ կարեւոր կեղբոնի մը մէջ արտօնացեալ քարոզիչ մը, որ քարոզչութիւնը ձգելով հնակարկատութեամբ կը պարապէր, երկու մէճիտ ստանալով պատկից երկու՝ բառին բովանդակ նշանակութեամբ՝ յիմարներ, որոնք Լուսաւորչական էին, և Հայ, կաթողիկ և Բողոքական եկեղեցիներ մերժած էին պակել զանոնք իրենց յայտնի խելագարութեան պատճառով: Պաշտօնագուրկ, և մանաւանդ առեւտրական գործով զբաղող ձեռնադրուած երէցներ և քարոզիչներ կրնան

պակ և այդ կարգի եկեղեցական գործեր կատարել: Վերոյիշեալ քարոզիչին գործը օրէնքի բացարձակ զեղծում մըն է, զոր ամէն մարդ բացարձակապէս կը մերժէ: Բայց այդ կարգի զեղծումներ կը կատարուին երբեմն ձեռնադրուած՝ բայց տարբեր գործով պարապող՝ երէցներու կողմէն, վասն զի այդ մասին մասնաւոր օրէնք մը չկայ: Ե՛րբ ընդհանուր կանոնագիրով մը, արգելքով, վախճանը պիտի դուրս այսօրինակ զեղծումներու:

Յաճախ մեր եկեղեցիներուն մէջ կոիւններ կը ծագին ազգապետի և պաշտօնեայի միջեւ տեղի ունեցած անհամաձայնութիւններէն: Ազգապետ մը կը ջանայ իշխել ժողովուրդին վրայ, ամէն գործ իր ուզածին պէս ընել: Ան է որ քարոզիչ կը կանչէ, կամ կը ճամբէ յաճախ. անոր կամքը միահեծան է: Եւ երբ քարոզիչ մը համարձակութիւն ունենայ ազգապետի մը եկեղեցիին շնաստեբ մէկ արարքին դիմադրելու, ան ապաքարը կը սկսի. ա՛լ ազգապետը կը դառնայ քարոզիչին անհաշտ մէկ թշնամին, մինչեւ կը յաջողի ճամբել զայն: Ազգապետ մը այս աստիճան, միապետական և յաճախ բռնապետական դառնալու աստիճան, իրաւասութիւն ունի՝ Աւետարանական ոգիով կազմուած եկեղեցիի մը մէջ, որուն սկզբունքներն են ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն: Թէ՛եւ երբեմն պաշտօնեաներէ ոմանք ալ ազգապետ ըլլալու մարմաջէն բռնուած կը ծագեցնեն պայքարներ: Իմ կարծիքով գաւառական ազգապետութիւնը մեր եկեղեցիներու մէջ, բացառութիւնները յարգելով, ընդհանրապէս գայթակղութեան և կոիւրի բար եղած են: Մանաւանդ այս աղատութեան շրջանին մէջ, զինուորական տուրքն ալ ջնջուած ըլլալով, ա՛լ գաւառական ազգապետներու շատ գործ չի մնար, բաց ի տարին քանի մը անգամ պաշտօնական օրերու մէջ կառավարութիւնը այցելելէ, և այդ գործը ունէ մէկն ալ կրնայ կատարել: Հետեւաբար, ոչ թէ կ. պոլսոյ, այլ գաւառներու ազգապետութեան ջնջումը պիտի ազատէ մեր կարգ մը եկեղեցիները անհարկի վէճերէ և երկպառակութիւններէ:

«Զո՛րն ասեմ և զո՛րն խոստովանիմ» . . . «Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ:» Այսպէս ամէն մարդ, ազգապետ կամ երէց, քարոզիչ կամ ուսուցիչ, տէր կամ ծառայ, կանոնագրի չգոյութիւնը պատճառաբանելով կ'ընէ իր աչքին երեւցածը, և յառաջ կու գան անլուծելի կնճոտութիւններ, անտեղի կոիւններ և բաժանումներ եկեղեցիներու մէջ, որոնք չեն շիներ, այլ ընդհակառակը կ'աւրեն, կը քայքայեն մեր եկեղեցիներու ոյժը, միութիւնը



և որբութիւնը: Ո՞վ է պատասխանատուն, Կ. պոլսոյ Ազգապետարանը, Միութիւնները, եկեղեցիները, պաշտօնեաները, որո՞նք, չեմ գիտեր: Պատասխանատուներու միայն կ'ուզղեմ խօսքս: «Մէկ-դի ըրէք ձեր եւձաշ եւձաշի քաղաքականութիւնը, փրկեցէք, շուտով փրկեցէք մեր եկեղեցիները, Գրիստոսի սիրոյն համար, անհատներու քմահաճոյքներէն և կործանումէ, եթէ ոչ՝ օր մը պիտի բանաք ձեր աչքերը, և ահա պիտի տեսնէք բազմաթիւ եկեղեցիներ արդէն տկարացած, քայքայուած և կորսուած իսպառ: Այն ատեն ձեր կանոնադիրը, ժամանակը անցած ըլլալուն համար, բանի մը պիտի չծառայէ:»

Տարիներ առաջ Աւետ. ուրոյն եկեղեցի մը կազմելով շեշտեցինք Հայ Եկեղեցիին բարեկարգութեան պէտքը. և սակայն մենք այսօր կանոնագրէ և մասնաւոր կազմակերպութենէ զուրկ կը կարօտինք բարեկարգութեան: Մեր տունը չբարեկարգած կ'ուզէնք ուրիշ տունը բարեկարգել: Այն ատեն Հայ Եկեղեցիին իրաւունք չունի՞ մեզ ըսելու, «Բժիշկ, բժշկեա զանձն քո:»

ԿՈՄԻՏԱՍ ՆԻՋԱԿՈՒՆԻ

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԳԻՆԸ

«Աստուածներ ոեւէ բան աղուոր գինով մը կը ծախեն մարդու:»  
Է՞րբ:»

«Երկինք երբեք չօգնէր այն մարդուն որ չուզեր գործել:»  
Սո՞վիչ:»

«Կատարէ լաւագոյն կերպով ինչ որ կրնաս, լաւագոյնը ըրէ միշտ, առանց խորհելու համբաւի վրայ:»  
Լո՞ւկի:»

«Որոշ և զօրաւոր նպատակէ դուրս յաջողութեան ճամբայ չկայ, նպատակէ մը որուն հիմն է նկարագիր, զարգացում, դիրք և ոեւէ տեսակ ըստացում:»  
Թ.Թ. Մը՛նը:

«Մարդիկ յաջողութիւնը կը պաշտեն, սակայն շատ քիչ կը խորհին այն միջոցներուն վրայ որոնցմով կը ստացուի այն:»  
Հ. Մ. Ֆել:»

«Ո՞րպիտի երկնային, ողբալի արտայայտութիւն» կը բացադանչէր Օր. Սիպիլի Պուլուրբի «Քէնէլմ Զիլինկիլի» մէջ, հիացմամբ գիտելով մանկիկը, «անիկա հրեշտակները թողելով երկիր իջնելուն համար շատ արտում կ'երեւի:» Եկեղեցական մը որ դայս լսած էր՝ պատասխանեց, «Այդ լաւ է, մօրաքոյր Սիպիլ, սակայն պէտք է որ մանկիկը քաջալերութիւն ստանայ և իր պատերազմը պատերազմի բարի սրտով մը, մահկանացուներու մէջ, եթէ կ'ուզէ դարձնալ հրեշտակաց դասին»

միանալ:» Նոյն սկզբունքը կը տիրէ նոյն իսկ ամենաչնչին գործին կատարմանը մէջ:

Վաղեմի Հելլեններէն մին կը խորհէր իր մեղունները փրկել տաժանակիր աշխատութենէ, ուստի անոնց թեւերը կոտրեց, և ծաղիկներ հաւաքեց անոնց համար որպէս զի կարենան տան մէջ մեղր շինել. սակայն դժբաղդարար անոնք մեղր շինելէ դադրեցան:

«Գերազանցութիւն ձեռք բերելու համար մէկ մեթոտ միայն կայ, այն ալ խիստ աշխատութիւն է:» ըսաւ Սիտնէ Սմիթ:»

Սըր շաշուա Րէյնոլտսի նշանաբանն էր. «Գործել, գործել, գործել:» Վոլթէրի նշանաբանն էր, «Միշտ գործի վրայ:» Միքայէլ Անճէլօ զարմանալի աշխատող մըն էր, այն աստիճան որ իր լաթերովը անկողին կ'երթար որպէս զի քունը չտանելով ելլել ստիպուէր և կարենար անմիջապէս գործի սկսիլ: Անոր սիրելի խորհրդանշանն էր, բեռնակառքի մը մէջ ծերունի մը, որուն վրան ժամացոյցի ապակի մը կը գտնուէր և սա արձանագրութիւնը կար, «Տակաւին կը սորվիմ:»

Երբ Պէլվէտէր կուրացաւ, կ'ուզէր երթալ ու արձանները իր ձեռքովը քննել ու գննել: Գոպտըն սովոր էր բսել, «Ես ջօրի մը նման կը գործեմ, առանց վայրկեան մը կորսնցնելու:» Կ'ըսուի թէ Հանտել մեծ երաժիշտը՝ տասներկու մարդու գործը կը կատարէր: Ոչ մէկ բանէ կը վախնար, և ոչ ալ կը վնասէր: Լորտ Բամէրսթըն նոյն իսկ իր ծերութեան ատեն գերիի մը նման կ'աշխատէր: Հրմպոլթ աշխարհի մեծ գործողներէն մին էր. միջին հաշուով երկու ամիսը անգամ մը հատոր մը կ'աւարտէր:

Դանիէլ Ուէպսթըր ըսաւ, «Օրական տասներկու ժամ աշխատելով յիսուն տարի գործած եմ:» Չարլս շէյմս Ֆոքս մեծ ատենաբան մը եղաւ, սակայն անոր անձնական բարեկամներէն շատ քիչեր գաղափար ունէին անոր ինքզինքը կատարելագործելու համար թափած ջանքերուն մասին, «բոլոր արուեստներու արուեստին» համար: Անիկա խօսելու կամ ինքնազարգացման ոեւէ առիթ չէր փախցներ: Հէնրի Բլէյ մեծ ատենաբանը շատ տարիներ գրեթէ ամէն օր յարգանոց կ'երթար ու հոն կը ճառախօսէր՝ ունկնդիրներ ունենալով միմիայն արջառները: Ան ըսաւ. «Մի թողուր որ օր մը անցնի առանց խօսելու կարողութիւնդ հրահանգելու:» Կեսար կ'իշխէր մարդիկը ահաբեկելով: Կիկերոն կ'իշխէր մարդոց սիրտը գրաւելով և անոնց կիրքերուն տիրանալով: Կեսարի ազդեցութիւնը իրեն հետ անհետացաւ: Կիկերոնի ազդե-



ցուծիւնը մինչեւ այսօր կը շարունակէ: Պիչը՝ տինդերահոչակ քարոզիչը՝ սուրբ էր խօսելու վարժութիւններ ընել շատ տարիներ անտառներու և դաշտերու մէջ:

«Գործել կամ սովամահ ըլլալ» այս է բնութեան նշանաբանը: Այս նշանաբանը դրոշմուած է ինչպէս աստղերու նոյնպէս հողակոչտերու վրան: Անգործութեան արդիւնքն է սովամահութիւն ֆիզիքայէս, սովամահութիւն մտաւորայէս և բարոյայէս: Բնութեան անողոք օրէնքներէն մին սա է որ ինչ բան որ անգործութեան կը դատապարտուի՝ կը փճանայ:

Երբ միլիոնատէր Վանտէրպիլթի հարցուցին իր առեւտուրի մէջ յաջողութեան գաղանփը, «Քաղաքի՛ք, այդ բանը գաղտնիք չունի», պատասխանեց մեծ միլիոնատէրը. «ընելու բոլոր բանն է գործը շարունակել և յառաջ ընթանալ»:

Երբ Կայսր Սեւերոսի զինուորները իր շուրջը հաւաքուեցան անոր մեռնելու պահուն, անոր վերջին խօսքն էր, «Գործե՛նք»:

Կեանքիդ մէջ միայն մարմինդ՝ այսինքն անասունդ սնուցանելու մի աշխատիր. կեանքը ատկէ շատ բարձր նպատակ մը ունի:

Մեծն Հոոմի նշանաբանն էր. «Գործել» «Արդիւնք արտադրել» Ահաւասիկ Հոոմի բոլոր աշխարհ նուաճելուն գաղտնիքը հոս կը կայանայ: Ամենամեծ գորավարներ իրենց յաղթութիւններէն վերջ իրենց արօրին դարձած են: Հոոմի մէջ երկրագործութիւնը միշտ յարգի կը սեպուէր, և Հոոմայեցի մը մեծ հողագործ անուանել անոր տրբուելիք ամենամեծ պատիւը տալ էր: Անոնց տոհմային անուններէն շատեր երկրագործութենէ առնուած անուններ են. ինչպէս Կիկերոն կը նշանակէ ձեւաւոր պոռ մը, Եւ Փապիուս՝ տեսակ մը բակլա, եւն: Հոոմէական կայսրութեան նախկին օրերուն գեղջուկ ցեղերը առաջնակարգ դիրք մը ունէին կայսրութեան մէջ: Իսկ քաղաքացիք կը նկատուէին հեղգ ու անջիղ ցեղ մը:

Հոոմայեցիք հզօր ազգ մըն էին, մինչ աշխատասիրութիւնն էր Հոոմայ ժողովուրդին առաջնորդը: Սակայն երբ հարստութիւնն ու գերիներու առատութիւնը Հոոմայեցին գործելէ դադարեցին, ահա այդ վայրկեանէն սկսաւ անոր փառաց ջահը մարիլ:

Հորտ ֆէմպըլ տունն չայցելելուն համար սապէս գրեց իր հօրը իբրև չքմեղանք. «Յաջողութեան ունէ առիթ մը ունենալու համար ուրիշներէ աւելի անյողոքող ըլլալու եմ. երբ ուրիշներ թատրոն կը գտնուին, ես տունը ըլլալու եմ, երբ ուրիշներ

քնացած ըլլան, ես սերտելու վրայ ըլլալու եմ. վերջապէս երբ ուրիշներ քաղաք կը գտնուին, ես գիւղը գտնուելու եմ»:

Կտաւի կտոր մը, որու վրայ «Անճէլիւս» ընկատուած է, լիճու 125,000 տոլար կ'արժէ, մինչ հասարակ նկար մը հազիւ մէկ տոլար կ'արժէ: Վասն զի Միլէ 125,000 տոլարի ուղեղ և աշխատութիւն դրած է իր կտաւին վրան: Գործ մը այնքան արժէք ունի որքան ուղեղ կը դրուի անոր մէջ:

Երկաթագործ մը հինգ տոլար արժող երկաթէ պայտ կը շինէ, և կը շահի տասը տոլար: Դանակագործ մը նոյնչափ երկաթէ դանակներ կը շինէ և կ'առնէ 200 տոլար: Մեքենագործ մը նոյնչափ երկաթէ ասեղ կը շինէ, և կ'առնէ 61,000 տոլար: Ժամագործը նոյնչափ երկաթէ կը շինէ մեծ շարժիչ մը և կ'առնէ 200,000 տոլար, և կամ կը շինէ ժամացոյցի զսպանակին փաթթուած թելը և կ'առնէ երկու միլիոն տոլար:

Աստուած ամենամեծ արժէքը ունեցող բանին ամենամեծ զինը դրած է: Եթէ մէկը կ'ուզէ ամենաբարձր յաջողութեան տիրանալ՝ պէտք է ամենաբարձր զինը վճարէ իր անձին:

Հոոմայեցիք իրենց երկու տաճարներուն մէջ — Առաքինութեան և Պատիւի տաճարներուն մէջ — նստարանները այնպէս մը կարգադրած էին որ ոչ ոք կրնար մտնել երկրորդին՝ առանց անցնելու առաջինին մէջէն: Այսպէս է յաջողութեան կարգը: Առաքինութիւն, Աշխատասիրութիւն և Պատիւ: Յաջողութիւնը տաժանակիր աշխատութեան և յարատեւ ջանքի ծնունդն է:

Շատեր աղքատութիւնը կը նկատեն իբրև վնասակար բան, և կը մոռնան թէ աղքատութիւնը եղած է միշտ գօրաւոր խթան մը գրեթէ բոլոր մեծ ձեռնարկներու մէջ, ամէն դարու մէջ: Բազմաթիւ ապուշներ ծնած են պալատներու մէջ, մինչդեռ աշխարհի Փրկիչը ախոտի մը մէջ ծնաւ: Փէն կ'ըսէ. «Առանց նեղութեան չիք պսակ, առանց փուչի չիք գահ, առանց վիշտի չիք փառք, առանց խաչի չիք թագ»:

Պանաբրմա

ԱՐԱՄ Մ. ԹՈՐՈՍԵԱՆ

ՖՐԱՆՑ ԵՈՋԷՑ

Ապրող ամէնէն հանրաժանօթ մարդերէ մէկն է Ֆրանց Եոզէֆ որ Դեկ. Չին իր Աւստրիոյ գահը բարձրանալուն վաթսուներեքերորդ տարեդարձը տօնեց:

Այս բոլոր տարիներու ընթացքին ան պատասխանատուութիւններ կրած է և տեսած է գործեր, որոնց նմանը քիչ անգամ արձանագրուած է պատ-



մութեան մէջ, Դեռ հազիւ տասնըութը տարեկան պատանի մըն էր ան, երբ կ'իշխէր կայսրութեան մը վրայ որ ինը տարբեր ազգութիւններէ կը բաղկանայ, որոնց բոլորն ալ թշնամի են իրարու հանդէպ ու շատ փափաք ունին ինքնօրինութեան հունգարիա և Հիւսիսային Իտալիա արդէն ապրտամբած էին, և Վիէննա, կայսրութեան մայրաքաղաքը, դեռ նոր ազատուած էր Աւստրիացի ապրտամբներու ձեռքէն: Կերպը, որով այս պատանին յանձնառու եղաւ այս ծանր բեռին, և անոր իր ստանձնած կառավարութեան մասին հետապնդած նպատակը ցուցուած են այն յայտարարութեան մէջ զոր հանեց իր գահակալութեան ատեն: «Վըրտաւ ենք թէ Աստուծոյ օգնութեամբ և մեր ժողովուրդին բարեացակամութեամբ պիտի յաղորդենք միացնելու պետութեան բոլոր երկիրներն ու ցեղերը և պիտի կրնանք կազմել քաղաքական մեծ մարմին մը:» Ան իրբեւ նշանաբան ընտրեց «Ուժերով միացած» խօսքը, և իր իշխանութեան սկիզբէն մինչեւ հիմա իր հպատակները միացնելու միակ նպատակը հետապնդեց:

Ան իր երկիրներուն իրական իշխողը եղած է: Ոչ միայն ինք ընտրած է իր նախարարները, այլև ուղղութիւն տուած է նաեւ անոնց քաղաքականութեան, և իր մեծ բանգիտութեամբ ու դիւանագիտական յստակատեսութեամբ իր երկրին ամէնէն անկարեւոր բաներն իսկ իսկապէս կառավարած է:

Հակառակ իր մեծ դիրքին՝ ան շատ պարզ կեանք մը կ'ապրի: Կարծր անկողինի մը մէջ կը պառկի, կանուխ կ'արթննայ, շարունակաբար կ'աշխատի, և միշտ ալ յօժարակամ եղած է դժբախտութեանց և անարդարութեանց մասին մտիկ ընելու: Կարօտ մանուկներու վիճակով մասնաւորապէս կը հետաքրքրուի: Իր աղամանդեայ յոբելեանին առթիւ, 1908ին, մեծ գոհունակութիւն մը զգացած է հիմնաքարը դնելով Վիէննայի մէջ կառուցուած Աղգային Կեդր. մանկանց պատասպարանի մը:

Այսօր Աւստրիա-Հունգարիա միացեալ միապետութիւն մըն է, և անոր ընակչութիւնն ու հարստութիւնը բազմապատիկ աւելցած են անոր գահակալութեան թուականէն ի վեր, և անոր հպատակները, ո՛ր ազգութեան ալ պատկանին, իրենց Կայսր-Թագաւորին հանդէպ մեծ հաւատարմութիւն ու սէր ունին:

Թէեւ անոր իշխանութեան այս վերջին օրերը շատ փայլուն են, բայց վաթսուներեք տարուան բոլոր շրջանին վրայ ահնարկ մը նետելով կը զըտ-

նենք մութ ստուերներ ալ, որոնք աւելի մութ են հասարակ մարդոց կեանքերուն ստուերտութիւններէն: Ան կորսնցուցած է Լոմպարտիան և Վենետիկը: Բրուսիոյ 1866ի Եօթը Շարթուան Պատերազմին մէջ յաղթական հանդիսանալը Գերմանական Դաշնակցութիւնը կամ Պուշտը, որուն Աւստրիա առաջնորդող անդամն էր, վերջացուց: Ձինքը սպաննելու համար քանի մը անգամ փորձեր եղած են. անոր ամուսինը սպաննուեցաւ ի տալացի անիշխանականի մը ձեռքով, և անոր դահաժողանք միակ զաւակը անձնասպան եղաւ:

Ներկայիս պարզներէն քիչ մարդիկ կան որոնց կեանքէն այսչափ կարեւոր գործեր կախեալ են: Կայսրութեան տարբեր ազգութիւններուն միութիւնը ժողովուրդին անոր անձին հանդէպ զգացած յարգանքին և սիրոյն հետ այնչափ կապուած է որ հաւանական է որ անոր մահովը հին թշնամութիւնները վերսկսին, և կայսրութիւնը բաժան բաժան ըլլայ: Աւելի մեծ վտանգ մըն ալ այն է թէ Եւրոպայի խաղաղութիւնը կրնայ խանգարիլ: Իբրեւ ճշմարտութիւն կրնայ ըսուիլ թէ անոր զբաղմունքներուն ու մտահոգութիւններուն կարեւորներէն մէկը եղած է՝ միջազգային խաղաղութիւնը, և ինքը երկար տարիներ իբրեւ անոր պահպանը եղած է: Ահա այս խնդրին նուիրած է ան իր աննման փորձառութիւնն ու հանրածանօթ տաղանդը:

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Ինչպէս ամէն սահմանադրական երկիրներու նոյնպէս ալ Թուրքիոյ մէջ շատ ընական է թէ ընտրական պայքարը ամենամեծ խանդով պէտք է մղուի: Մեր աղգային վարչական և կուսակցական մարմինները, որ միշտ վերջին վայրկեանին կ'արթննան և նոյն իսկ մերձաւոր պայագային պատահելիք դէպքեր կանխամտածելու բարի սովորութիւնը չունին, վերջապէս սկսան շարժիլ և անաթէ երկար ժամեր մտածելէն ետքը ինչ որոշում տուին: «Ամէն Հայ Օսմ. երեսփոխան, պարտաւոր պիտի ըլլայ անպայման ենթարկուելու ազգ. ընդհանուր շահերու և Պարթիարտաններու առանցսաշնորհմանց հարցերուն շուրջ Փարլամէնթի Հայ Իմքալցութեան միջամանութեան որոշումին: Այս պայմանը նախապէս չընդունող թեկնածուն և կամ զայն ապագային չի գործադրող Հայ մէպուսը պիտի յայտարարուի թէ ներկայացուցիչ չէ Հայ ժողովրդեան»: Այսպիսի բանաձեւեր ընական է ամէն Հայ անհատի կատարելապէս վստահութիւն ներշնչող եղանակով պէտք է խմբագրուին և թիւրիմացութեան որեւէ առիթ մը պէտք չէ ընծայեն, որպէս զի ամէն Հայ անհատ իր քուէն խղճի ամենայն հանգարտութեամբ



կարենայ տալ առաջարկուած թեկնածուներուն Դժբախտաբար վերոյիշեալ բանաձեւը այս տարրական պայմանները չի լրացներ: Մեր կարծիքով ընտրական մասնաժողովը նախ պէտք է պատրաստէր ամէն Հայ երեսփոխան ճազգային ընդհանուր շահերը և Հայոց Պատրիարքարանի առանձնաշնորհումները պարտաւարձ և ապա այս տեսակէտով տըրուելիք մեծամասնութեան որոշումին ենթարկուելու: Հակառակ պարագային եթէ «ճազգային ընդհանուր շահերու և առանձնաշնորհմանց շուրջ» մեծամասնութիւնը ազգապիտան որոշում մը տայ, փոքրամասնութիւնը ինչո՞ւ ենթարկուի այդ որոշումին և կամ ի՞նչ իրաւունքով այդ փոքրամասնութիւնը ազգին ներկայացուցիչը ըլլալու հանգամանքէն զրկուի: Կը կարծեմ թէ երկու բանաձեւերուն տարբերութիւնը ակնյայտնի է: Ենթադրենք պահ մը որ մեր թեկնածուները իրենց ընտրութիւնը յաջողցնելու համար Իրիւնկոյի ներքու ըրած են Պատրիարքարաններու առանձնաշնորհումները չպաշտպանել և այս ձեւով ընտրուած են Հայ երեսփոխաններու մեծամասնութիւնը: Մտածեցէք անգամ մը թէ ո՞րպիսի աղէտ մը պիտի ըլլայ այն ատեն «ճազգային ընդհանուր շահերու և առանձնաշնորհմանց շուրջ» վարչական յանձնաժողովի սուլած որոշումը: Անցեալ չորս տարիներու գործունէութիւնը, կամ որ աւելի ուղիղն է ըսել, անգործութիւնը դժբախտաբար դարձեալ պէտք եղած չափով չէ խրատած մեր կեդրոնը: Ասկէց զատ չենք գիտեր թէ ինչո՞ւ «ճազգային ընդհանուր շահերը» ընդհանուր խօսքով գոհացած է ժողովը և անոնցմէ ամէնէն կենսականները, որոնք անմիջական լուծման կը կարօտին, ինչպէս են հողային հարցը, ապահովութեան խնդիրը, Հայ պաշտօնեաներու, ժանտարմաներու անուանումի, զինուորագրութեան և այլ խնդիրներու լուծումը պարտաւորիչ չէ դարձուցած նոր ընտրուելիք մէկուաններուն համար: Պատրիարքարանը գործէ քաշուելէն առաջ գոնէ այսչափ ազգ. իրաւունք մը պէտք է ազահովէր կատարելապէս:

Բացի ասկից ուրիշ ուշադրաւ խնդիր մըն ալ կայ: Ընտրական պայքարը թողուած է քաղաքական կուսակցութեանց: Եթէ քաղաքական կուսակցութիւններ ըսելով պէտք է հասկնանք միմիայն ծանօթ Հայ կուսակցութիւնները, պէտք է անկեղծութիւն ունենանք խոստովանելու թէ անոնք ամբողջ ազգը չեն ներկայացներ և անոնցմէ ոմանք ունին այնպիսի մասնաւոր նպատակներ, որ միմիայն ազգային շահերուն նուիրուած կուսակցութեանց հետ կարելի չէ համերաշխիլ թէլև վերջին տարիներու մէջ ուրախութեամբ դիտեցինք թէ նոյն իսկ մեր ընկերվարական կուսակցութիւնները պարտաւորուեցան ազգայնական հանգամանք ստանալու, աւելի մեծ ժողովրդակաւնութիւն դառնելու համար, սակայն մտանալու չենք

երբեք թէ մեր ազգին մեծամասնութիւնը դեռ չէ շահեալ է և կազմակերպուած չէ: Այս պարագան նկատի առնելով կը սպասենք որ ընտրական յանձնաժողովին մէջ չէզոքներու ներկայացուցիչն եղող կեդրոնն և միւս կուսակցութիւններն ալ իրենց ներկայացուցիչները ունենան: Ասկից զատ յայտնի է թէ մեր որոշ կուսակցութիւնները Իրիւնկոյի հետ առաջուրէն պայմանագրուած են և անոնք ընկալանաբար իրենց կուսակցականները և համակիրները յառաջ պիտի քշեն, որով ազգային պառակտում մը յառաջ պիտի գայ: Այսպիսի պատահականութեան առջեւն առնելու համար պէտք է որ կազմուելիք ընտրական յանձնաժողովին մէջ կուսակցութեանց ներկայացուցիչները ո՞չ թէ ճանապարհական հանգամանքով ալ յանուն իրենց կուսակցութեանց ներկայանան և տրուած ընդհանուր որոշումներուն անպայման հնազանդին: Ընտրական յանձնաժողովը պէտք է շուտ գործէ, ապա թէ ո՞չ ամէն ինչ կորած է: Ընտրական յանձնաժողովին առաջին գործը գոյութիւն ունեցող և մեծ կուսակցութեանց հետ բանակցիլն է և անոնցմէ ո՞վ որ ամէնէն աւելի մեծ շահ կ'ապահովէ մեզի՝ անոր հետ համերաշխ գործելն է: Ամէն ազգ իր թուական համեմատութեամբ իր ներկայացուցիչներուն թիւը աւելցնելու կը ձգտի: Մենք որ 20 երեսփոխան ունենալու իրաւունք ունինք, անցեալ չըջանին ներկայացանք միմիայն 11 երեսփոխաններով: Առաջին պահանջնիս, ուրեմն, ըլլալու է մեր երեսփոխաններու թիւին յաւելումը: Երկրորդ և կարեւոր պահանջնիս ըլլալու է ո՞չ թէ այսինչ կամ այնինչ կուսակցութեան հաճելի, այլ մեր շահերուն քաջ պաշտպան երեսփոխաններ ընտրել տալ: Այս պահանջներու իրագործումին համար ընտրական ժողովը պէտք է շուտով նշանակէ այն չըջանականները, ուր Հայ երեսփոխաններ պահանջելու իրաւունք ունինք: Պէտք է տեղեկութիւններ քաղէ թէ այդպիսի վայրերու մէջ Իրիւնկոյի կամ Իրիւնկոյի հետ միանալով ո՞րչափ հաւանականութիւն ունինք մեր նշանակած երեսփոխաններուն ընտրութիւնը յաջողցնելու: Եթէ անհնարին դառնայ մեր նպատակին հասնիլ մէկ կուսակցութեան հետ միանալով, պէտք է տեղական համաձայնութիւններ կնքել անոնց հետ, միայն թէ ամէն տեղ Հայերս պէտք է համերաշխ գործենք, հակառակ պարագային ամէն բան կը կորսնցնենք: Մեր դիրքը Յոյներէն տարբեր է. անոնք որոշ չըջանականներու մէջ կեդրոնացած են, մենք ցրուած ենք:

Այս բոլոր գործողութիւնը պէտք է տեղագրիլ նոսնալով յառաջ մղուել և ամբողջ կայսրութեան մէջ եղած Հայերը արդէն Դեմիտրիեւի առջիններու ընտրութեան միջոցին կազմ ու պատրաստ ըլլան, ինչպէս որ են այսօր Յոյները: Ասոր համար կը վախնանք թէ ուշ մնացինք:

Հ. ՄԱՍԻՍԻԱՆ



# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

## ԱՐՏԱՔԻՆ

Պատերազմը. Ռազմադաշտէն շատ լուր չկայ: Անցեալ հինգշաբթի և ուրբաթ զինեալ Արաբներ Իտալական հրամանատարին ներկայացած և անձնատուր եղած են: Անոնք մեծ մասամբ Թարհունայէ եկած էին: Այն Զարայի և Կարկարէշի զէմ դարձեալ բուն գործողութիւն կատարուած է բնիկներու և թուրքերու կողմէ, բայց առանց արդիւնքի: Իտալացիներու կորուստն է 2 մեռեալ և 8 վիրաւոր: Ֆրանքեւիտայեան միջադէպը կարգադրուեցաւ երկու կողմերու համար ալ գոհացուցիչ կերպով: Իտալեան կառավարութիւնը քըննութեամբ մը համոզում գոյացուց թէ Մանուկայէ առնուած 29 թուրքերը բժիշկ և հիւանդապահ են: Անմիջապէս յանձն առաւ զանոնք Քալիարիի Ֆրանսական հիւպատոսին յանձնել՝ Ֆրիուլ զրկելու համար: Երկու կառավարութիւնները համաձայնեցան և հաստատեցին թէ իրենց վաղեմի բարեկամութեան և անկեղծ զգացումներուն հակառակ ոեւէ զգացում չունին իրարու հանդէպ և որոշեցին Ֆրանքեւիտայեան իրաւարարական դաշնագրին համաձայն Լահէի իրաւարարութեան յանձնել սոյն գրաւումներէն ծագած խնդիրները: Ետքաւ իրիկուն 29 թուրքերն իրենց գոյքերով ու դրամներով Ֆրանսական հիւպատոսին յանձնուեցան և կիրակի առաւօտ Սէն Օլիւսէն չոգենաւով Ֆրիուլ տարուեցան, ուր Ֆրանսական կառավարութիւնը պիտի ճշտէ անոնց ինքնութիւնը և թունուղ պիտի զրկէ Կարմիր Մահիկի անդամները միայն: Իսկ Հոռմի Ֆրանսական գործակատարը Փարիզ հրաւիրուեցաւ բացատրելու համար թէ ինչո՞ւ արտօնեց Քալիարիի հիւպատոսը՝ Մանուկայէ հանել նոյն ուղեւորները: Ֆրանսական այս երկու շոգենաւերէն զատ գրաւուեցաւ նաեւ ուրիշ մը, Թալիւնո, և երկու անգամ քննուելէ ետեւ արձակուեցաւ իբրեւ արգելեալ ոչինչ փոխադրող: Այս դարձեալ զայրացուց թունուղցիները, որոնք ցոյցեր ըրին Իտալիոյ դէմ: Աւստրիական Լոյտի Պէլէնը չոգենաւ ալ Փէրիմի հիւսիսակողմը բռնուեցաւ Իտալական ծովառմբակրահալածէ մը, որ 14 ուղեւոր ձերբակալեց ու տարաւ իբրեւ թուրք զինուորականներ: Մին գնդապետ էր և կ'երթար կարեւոր պաշտօն մը վարել, իսկ ամէնը քաղաքային զգեստով էին:

Պատերազմը. Գահաժառանգ Պորիս իշխանը այս շաբթու չափահաս (18 տարեկան) կ'ըլլայ Պուլկար

Մահմանադրութեան համաձայն: Ամիս մը առաջ մասնաւոր քննութիւն մը կրեց և չափահաս համարուելու արժանի դատուեցաւ: Կառավարութիւնը Ֆերտինանտ ձարին փափաքով ճօխ պատրաստութիւն տեսաւ մեծ շքով տօնելու համար այդ դէպքը: Օտար ամէն տէրութիւններ հրաւիրուեցան ներկայացուցիչներ զրկել այդ առիթով: Ռուսիոյ Զարը Սոֆիա կը զրկէ իր գահաժառանգ իշխանը, Գերման Կայսրը Ֆրիտրիխ Լէոփոլտ իշխանը, Ֆրանսա զօրաբաժնի հրամանատար մը, Զօր. տ'Ամատ, Յունաստան գահաժառանգ իշխանը և թուրքիա Վիեննայի նախորդ գեսպան Ռէշիտ փաշայի նախադասութեամբ պատուիրակութիւն մը, որ հինգշաբթի կը ժամանէ հոն: Հանդէսը երէկ տեղի պիտի ունենար:

Հեռագրաւորքեր. Գերմանիոյ երեսփոխանական ընտրութիւնները աւարտեցան: Ելքը եղաւ 110 Ընկերվարական, 93 Կեդրոն, 43 Ազգայնական Ազատական, 43 Պահպանողական, 46 Յոռաշրիմական ժողովրդավար, 18 Լեհ, 13 Կայսերական, 14 Տընտես. Միութիւն, և խալիս, որով ձայնակողմը մեծապէս զօրացած է՝ կազմուելով 203 անդամէ, մինչ աջակողմը կը հաշուէ 194 անդամ միայն: Ընկերվարականները ամէնէն շատ աթոռ շահեցան՝ աւելի քան կրկնապատկելով իրենց նախորդ թիւը: — Աւստրիոյ գահաժառանգ իշխանը կիրակի Պերլին ժամանեց Կայսեր ծննդեան տարեդարձին առիթով և երեկոյին ներկայ եղաւ Գերման գահաժառանգ ամուլին զաւկին մկրտութեան: — Ֆրանսայի ծերակուտական յանձնաժողովը 2ի զէմ 15 քուէով ընդունեցաւ Ֆրանքեւիտայեան համաձայնութեան դաշնագիրը: Կը հաշուուի թէ Մարտըի վրայ Ֆրանսական թեւարկութեան ծախքը լրացող տարուոյն մէջ պիտի ըլլայ մօտաւորապէս 61 միլիոն Ֆրանք, նոյնչափ ալ այս տարի: — Լանքաշիրի բոլոր մանարանները բացուեցան և գործարանատէրեր ու գործաւորներ պայմանագիր մը ստորագրեցին, որով յանձն կ'առնեն տարի մը գործադուլ չընել: — Անցեալ ուրբաթ Դաւրէժի մէջ 12 հոգի եւս գլխատուեցան, որոնցմէ ոմանք Հայ են: Ռուս ջոկատի մը ձեռամբ Մէշտի ընակչութիւնը զէնընկէց եղած է և պաշարման վիճակ հրատարակուած է քաղաքին մէջ: — Անգղիոյ արքայական ամուր անցեալ չորեքշաբթի Մայթա ժամանեց և խանդավառութեամբ ողջունուեցաւ ժողովրդէն և Ֆրանսական նաւարաժնէն: Ֆրանսացի Ծովակալը, սպանները և նաւաղները մեծ պատիւներ ընդունեցան Անգղիականներէն: Ծովակալը Թագաւորին ներկայացաւ, և Ն. Վեհափառութիւնը



փոխադարձ այցելութիւն տուաւ անոր մտաբանաւուն մէջ: Այդ առիթով սիրալիր հեռագիրներ փոխանակուեցան Յրանտայի Նախագահին և Ճորճ թագաւորին միջեւ: Նոյնպիսի հեռագիրներ փոխանակուեցան նաեւ Իտալիոյ և Անգղիոյ Վեհապետներուն միջեւ: Անգղ. Խորհրդարանի պատուիրակութիւն մը անցեալ շաբթու. Փեթըրսպուրի Ժամանեց և մեծ պատիւներով մեծարուեցաւ Ռուս իշխանու Չիւննիերէն և Չարէն: — Չինական լուրերը շատ ատորոքինակ են վերջերս: Ընդհարումները դադրած չեն, ինչպէս կը հասկցուի Կայսերականներու ձեռամբ Հսիէն Եանկֆուի ուժակոծումէն, վառու դարանի մը հրկիզումէն և յեղափոխականներու արշաւանքներէն: Միեւնոյն Ժամանակ կը ծանուցուի թէ Կայսրը մարքիզութեան աստիճան տուաւ Եուանչիքայի և թէ Հանրապետականներու պետ Սուենաթսէն սիրալիր հեռագիր մը ուղղեց Եուանչիքայի, ինչ որ յուսալ կու տայ թէ զինադուլի լրումէն (Յունվ. 29է) առաջ պիտի հրատարակուի Կայսեր հրատարման հրամանագիրը: — Աւստրիոյ Արտաքին գործերու նախարար Էրնսթայի կոմսին ակարութիւնը չբարւոքեցաւ: Վախ կայ թէ բժիշկները վերջնպէս պիտի յանձնարարեն հրատարիլ իր պաշտօնէն: — Մոնթենեկրօի պատերազմական պատրաստութիւնները մտահոգութիւն կը պատճառեն խաղաղասէրներուն: Նորընտիր աւագաթողովը լուծուած է և Ժողովրդային կուսակցապետը ձերբակալուած: — Անգղիական 29րդ արէստութիւն շինութեան ձեռնարկուած է անցեալ շաբթու: — Կարմիր Խաչի Գերման յանձնախումբին անդամները անվտանգ հասան Տրիպուսի սահմանագլուխը: — Անցեալ երկուշաբթի Բէմզի մէջ Ծիչէր և Փրէզօ օդաչուական մրցման մը մասնակցեցան և զլեցին ամենաբարձր թռիչքի ցարգ ծանօթ արձանագրութիւնը (1,075 մետր), մին բարձրանալով 1,380, իսկ միւսը մինչեւ 2,200 մետր: Գերման օդաչու մը նոյն օր սաւառնակով Պերլին Պորթ գնաց իր քուէն յանձնել և յետոյ Պերլին վերադարձաւ սաւառնակով: Լոս Անճէլէսի մէջ օդաչու մը 50 մետր բարձրութենէ մը վար ինկաւ ու մեռաւ անմիջապէս: — Անցեալ շաբթու երկրաշարժի ցնցումներ եղան Յոնիականի մէջ: Կեղրոնն է Չանթա կղզին: Ամէնէն աւելի շտապուեցաւ Բէֆալոնիա, որու գրեզներէն մեծ մասին տուները կործանեցան: Մեծ խուճապ եղաւ այդ երկու կղզիներուն մէջ: Մեռեալներու թիւը 8 կը ներկայացուի, իսկ վիրաւորեալներունը 20: — Կիրակի Թրքական Լապլան քարիւղաբարձ շոգենաւը Պատուի նաւահանգիստէն մեկնելու պահուն Պել-

ճիական շոգենաւու մը բախելով ընկղմեցաւ Նաւահանգներուն Ար ազատուեցան: — Փայֆի դուքսը (քեռայր Ճորճ թագաւորին) կողատուպէ մեռաւ:

ՆԵՐՔԻՆ

Մայրաքաղաք: Վարչապետը տակաւին դուրս չելլեր իր ընկալմանէն, բայց կարող է դառալ պետական գործերով: Նախարարներու խորհուրդը մերթ վարչապետական բնակարանին, մերթ Բ. Դրան մէջ կը գումարի: Եւ որոշեց երեսփոխաններու թոշակը աւելցնել չըջանին համար վճարել, Արլանական բարենորոգումներու ծրագիրը մասամբ դործադրել և մինչեւ մէկ շաբաթ իւրաքանչիւր նախարարութենէ տեղեկագիր առնել անմիջական դատուածներուն նկատմամբ, իսկ մնացեալները իրենց կարգին գործադրել: Չքուէարկուած նոր ելեւմտացոյցը պիտի գործադրուի, քանի որ ներկայէն իր փարսերութիւնը սա է որ աւելի խնայողական է և հետեւապէս անանորկելի: Ստիպողական օրինագիծերու քննութիւնը յառաջ կը տարուի փութով և որոշուած է կարեւորները գործադրել Կայս. վաւերացման ենթարկել ետեւ: Այդ կարգէն են նահանգներու և անշարժ ստացուածներու օրինագիծերը, Շքոթա-Փրէզիլի խնուղիին զինուորներու ձեռամբ շինութիւնը, ծովային գրաւումներու կանոնագիրը, Թալլըճայի և Սէնիչէի գաւառակներէն արմտիքի արտածման արգելումը: — Պետական Խորհուրդը աւարտեց երեսփոխանական ընտրութիւններու օրինագիծին քննութիւնը և տեղեկագիր մը մատոյց վարչապետութեան: Ներքին գործերու նախարարութիւնը այդ օրինագիծէն օրինակներ դրկեց դաւանները: Պետական Խորհուրդը որոշեց թէ Պոլսոյ հրկիզեալները պիտի կրնան ընտրութիւններու մասնակցել: քանի որ մէկը կրնայ քուէ տալ երբ թաղապետական ուեւ չըջանակի մէջ հաստատուած է տարիէ մը ի վեր: Եւ վճարեց թէ Փէնտիկի, Դարթալի, Պէլքոզի, Կէյզզէի, Կղզիներու, Շիլէի և Մաքրիքէօյի ընտրութիւնները Պոլսոյ կառավարութեան իրաւաստութեան տակ են, իսկ մայրաքաղաքի ընտրութիւնները Բաղաքապետութեան: Պոլսոյ կուսակալ Էմին պէյ Դասթէմուէնի կուսակալ անուանուեցաւ: Սէլանիկի կուսակալ Իպրահիմ պէյ Պոլսոյ, Սիւրբէի Հիւմայունի պետ Նէտիմ պէյ Պիթլիսի, նախկին քաղաքապետ Հիւսէյին Բեազիմ պէյ Սէլանիկի, Կինճի նախկին կառավարիչ Սալիլ փաշա Շքոտայի, Մէհմէտ Ալի պէյ Եանեայի, Ահմէտ Նէտիմ պէյ Ատանայի, իսկ Հիւսէյին կու-



սակալ Խալիլ պէյ Էտիրնէի — Պուլկար դեպպան Մ. Սարաֆով, Յունաց Պատրիարքարանին կողմէ վերջերս Պուլկար իշխաններուն ընծայուած պատիւներուն համար շնորհակալութիւն յայտնելու առիթով, շատ սիրալիր տեսակցութիւն մը ունեցաւ Պատրիարքին հետ և փափաքեցաւ շուտով վերջ տալ երկու ազգերուն անհամաձայնութեան և հերձուածի խնդրին, միանգամայն խնդրեց ներկայացուցիչ մը զրկել Պորիս իշխանին չափահասութեան հանդէսներուն, Պատրիարքը յետոյ փոխադարձ այցելութիւն տուաւ դեպպանին և մեծ պատիւներով ընդունուեցաւ: Յոյն թերթ մը կը հաւաստէ թէ դեպպանը պաշտօնապէս խոստացաւ նաեւ Պուլկարիոյ Յունական եկեղեցիները և վարժարանները իրենց կալուածներով Յոյներուն վերադարձնել: Ներքին գործերու նախկին նախարար Թալաթ և Խալիլ պէյերն ալ այցելեցին նոյն Պատրիարքին և առաջարկեցին որ Յոյները առաջիկայ ընտրութիւններուն մէջ Մ. և Յ. գործակցին: Ի փոխարէն պիտի յարգուին Պատրիարքարանի բոլոր օրինաւոր պահանջումները և Յի պիտի բարձրացուի Յոյն երեսփոխաններու թիւը: Պատրիարքը խոստացաւ խնդրը Խալիլ Թոզոլին ներկայացնել: Թոզոլն ալ որոշեց որ Պատրիարքարանը ընտրական պայքարին չխառնուի, այլ միայն Յոյն ազգը Պատրիարքարանին կողմէ հրաւիրուի միաբանութեամբ, լրջութեամբ և արթնութեամբ մասնակցել ընտրութիւններուն և, երբ զեղծում պատահի, Պատրիարքարանը հարկ եղած դիմումն ընէ կառավարութեան մօտ: — Ներքին գործերու նախարարը կը հերքէ սա զորոյցը թէ Ֆէրիտ և Հիւսէյին Հիլմի փաշաներուն նախագահութեամբ բարենորոգիչ երկու յանձնախումբ պիտի զրկուի Ալպանիա բացարձակ իրաւասութեամբ: Կ'ըսէ թէ ինք անձամբ պիտի երթայ հոն տասը տասներկու օրէն և պիտի հսկէ անմիջական բարենորոգումներուն գործադրութեան: Գերման թերթեր կ'ըսեն թէ նախարարը 11,000 ոսկի զրկած է Մալխիա քանդուած տուներու շինութեան համար: Վարչապետական խորհրդականը Ալպանացի երեսփոխաններուն հաղորդեց թէ առայժմ որոշուած է Ալպանիոյ դատական ու քաղաքային անարժան պաշտօնեաները փոխել, ոստիկաններէն ու ոստիկան զինուորներէն կարողները պահել, բանտերը բարեկարգել, պաշտօնատուները վայելուչ վիճակի մէջ դնել, ամէն տարի կարևոր վարկ մը յատկացնել ճամբաներու շինութեան, երկաթուղիի ստիպողական գիծերը շինել, Պոյանա գետը մաքրել և Փրէզրին-Շքոտարայի խճուղին շինել: Ալպանացիները պատասխանած են թէ առօնք են կարեւորագոյն պէտքերը: — Անգղիացի տեղակալ Հըրպըրթ Մոնթէկիւ քանի մը օրէ ի վեր հիւր է Պա-

տերազմական նախարարութեան և հացկերոյթներով կը մեծարուի: — Յրանսական դեպպանը Փարիզ ուղեւորեցաւ արձակուրդով: Նահանգներ. Եմէնի հրամանատարը կ'ըսէ թէ Բոնֆուտայի առջև քանդուած Օսմ. թնդանօթաւորներուն թիւը 2 է և ոչ 6, իսկ Սալահ կը պնդէ թէ քանդուած են 5 և զրաւուած է 1 թնդանօթակիր: — Իւսկիւպի մէկ գիւղին մէջ ձերբակալուած է Ֆէնէրցի հրոս Սփասիո Թասօ վիրաւոր վիճակի մէջ, որիչ գիւղի մը մէջ սպաննուած են հրոս Փավլով և իր 4 ընկերները, իսկ Հիւսէյին և ընկերները անձնատուր եղած են: Նոյն նահանգի Բիւրէլէր գիւղախմբին մէկ վանքին մէջ ցերեկ տան 8 այր և 1 կին անխնայ սպաննուած են, Փրիշիւնայի եկեղեցիին մէջ 4 Պուլկար, իսկ Մանասթըրի Թէրէքէ Փաղարին մէջ զրամատան մը ներքին սանդխին տակ երկու ուսմբ պայթած է: Շթիպի մէջ 8 հոգի ևս մահուան դատապարտուած, 12 նոր ուսմբ գտնուած և եկեղեցիի մը մէջ 4 Պուլկար սպաննուած են: Բատովիշի մէջ այս շարթու զրան մը առջև զրուած ուժանակի պայթումէն 8 հոգի մեռան և 7 վիրաւորուեցան, ուսմք ոստիկան զինուոր և ուսմք պարզ անհատներ: — Պասրայէ կը հեռագրուի թէ Ղէպիրցի և Բուֆացի 5ական անձեր Բուլէյթի շէյխին վրայ յարձակած ու բռնուած են: Միւնթէֆիզի ցեղային կռուին մէջ 90 հոգի սպաննուած և բազմաթիւ անձեր վիրաւորուած են: Գիշեր մը հրոսախումբ մը Գուրնա գիւղին շուկան կողոպտել ձեռնարկած է, բայց ի վերջոյ ստիպուած է փախչիլ գիւղացի մը սպաննելով: — Պուլանըզի մէկ գիւղին մէջ 5 հոգի ցեղային կռուի մը զոհ ընկած են: Ոճրագործներէն մին ձերբակալուած է, նմանապէս Մուշի գիւղացիներէն Մուսա պին ի Վէլուտ և քանի մը Բերդակցիներ:

Աւետ. Ժող. Վազը կէսօրէ ետքը ժամը 2.45ին Լանկայի եկեղեցին Հաղորդութեան Սբ. Խորհուրդը պիտի կատարէ Պայսըլ Հաուսի մատրան մէջ, — Վեսմ. Ազգապետ էֆ. քանի մը օրէ ի վեր իր բնակարանէն զուրս չելլեր տկարութեան պատճառով: — Հետեւեալը կը հաղորդուի մեղի Գահիրէէ. Տեղւոյս Հայ Աւետ. Ժողովրդեան փափաքով եկեղեցւոյս հոգաբարձութիւնը հրաւիրեց Աղեքսանդրիոյ հովիւ Վեր. Բ. Ս. Ճէճիդեանը Յունով. 14ին քարողել հոս: Վեր. Բ. Ս. Ճէճիդեան իր տիկնոջ հետ Յունով. 10ին եկաւ և 12ին ուրբաթ գիշեր առաջնորդեց ազօթքի ժողովին: Յունով. 14ի կիրակի օրուան պաշտամունքին երկու հարիւրի չափ բաղմութիւն մը ներկայ էր: Վեր. Բ. Ս. Ճէճիդեան նոյն օր առաջին անգամ կատարեց Հաղորդութեան



և Մկրտութեան խորհուրդները : Մկրտուող երասան էր տեղւոյս հոգաբարձութեան համակրելի և բազմաբղիւն զանձապետ Տիար Պօղոս Մարտիկեանի զաւակը որ Պետրոս անուանուեցաւ : Տէրունական Սեղանին կ'սպասարկէին Պատ. Արմենակ Միրականեան և Պատ. Հայկազուն Խանդավազը : Հազարդութեան մասնակցողներուն թիւը 30ի չափ էր : Այս առթիւ Վեր. Բ. Ս. Ճէճիգեան շարաթ մը մնաց Գահիրէ և ժողովրդեան կողմէ սիրով հիւրասիրուելէ յետոյ դարձեալ իր տիկնոջ հետ մեկնեցաւ իր պաշտօնատեղին : Ա. Մ. Գաբաճեան, — Քալիֆորնիայէ ալ հետեւեալը կը գրուի .

Հայ գաղութը տարուէ տարի կը շատնայ Քալիֆորնիոյ մէջ : Սան Ֆրանսիսքօ, Ֆրէզնօ, Ֆատուլըր, Լոզ-Անձէլէս, Եդեմ, մեծ կեդրոններ կը դառնան Հայութեան : Ուրախալի է տեսնել նոր գաղթական Հայերու ջանքը դէպի եկեղեցական կազմակերպութիւններ : Հայաշատ կեդրոններ ունին իրենց եկեղեցիներն ու քարոզիչները : Դեկ. 28-31ին Քալիֆորնիոյ Հայ ժողով. Միութեան տարեկան ժողովը գումարուեցաւ Լոզ-Անձէլէսի մէջ : Լոզ-Անձէլէսի Գեթսեմանի Հայ Աւետ. եկեղեցին հիւրասիրեց բոլոր նուիրակներն ու երէցները : Ծառ օգտակար ժողովներ ունեցան Հայերը ընդհանուր առմամբ : Թառաջիկայ տարւոյ համար Միութեան պաշտօնեաներ ընտրուեցան Վեր. Հ. Խաչոյեան Նախագահ, Տիար Արամ Երէցեան Քարոզչու, Վեր. Յ. Սանդիկեան Գանձապահ : Եդեմի ժողովուրդը սկսած է կառուցանել նոր եկեղեցի մը : Ֆրէզնօի մէջ կան երեք եկեղեցիներ, մէկ Լուսաւորչական և երկուք Բողոքական : Ֆատուլըրի մէջ երկու եկեղեցի կայ, մին Լուս. և միւսը Բողոք. : Նոր գործ մը սկսուած է Ֆրէզնօի շրջակայ գիւղերուն մէջ :

Հայ Ժող. Օրուան հրատապ հարցն է թէ ազգը ինչ զիրք պիտի բռնէ երեսփոխանական յառաջիկայ ընտրութիւններուն մէջ : Վարչութիւնը սկզբբամբ որոշեց թէ Պատրիարքարանը խառնուելու չէ ընտրական պայքարին և թէ այդ հոգը յանձնուելու է կուսակցութիւններու և անկախներու ինչպէս և ազգային այլեւայլ հատուածներու ներկայացուցիչներէն բազկացած ընտրական յանձնաժողովի մը, որ իր կարգին որդեգրեց նոյն սկզբունքը և որոշեց ոյժ տալ այնպիսի Հայերու ընտրութեան որոնք յանձն կ'առնեն պաշտպանել Ազգ. Պատրիարքարանի առանձնաշնորհներուն հետ նաև ազգ. ընդհանուր շահերը և ի հարկին ենթարկուել նոյն պայմանն ընդունող իրենց ընկերներուն մեծամասնութեան որոշման : Ընտրական այդ յանձնա-

ժողովը իր խորհրդակցութիւնները կը շարունակէ և ի մօտոյ իր զիւանը կազմելով պիտի աշխատի համայն ազգին կողմէ : Առ այժմ սա յայտնի է թէ Դաշակցութիւնը Իթթիհատի հետ բանակցութեան ձեռնարկած է զանազան խնդիրներու համար, ինչ որ անշուշտ ազգին ամբողջութեան յատուկ ձեռնարկ մը չկրնար համարուել : Յարգ հրատարակուածներուն մէջ ամէնէն գործնականը կը համարինք փաստաբան Գասպարեան էֆ.ի սա առաջարկը թէ մայրաքաղաքիս Թաղ. Խորհուրդները ստանձնեն այդ գործը, անոնց զիւանները (իրբ 66 հոգի) հրաւիրուին իրբու ընտրական համագումար մարմին, որ կազմէ կեդր. յանձնախումբ մը և ուրոյն շրջանակներու համար ալ գործադիր ճիւղեր : Այս դրութիւնը ամէնէն ապահովը պիտի ըլլայ և անհաշտ չէ ազգ. ուրիշ հատուածներու գործակցութեան սկզբունքին հետ : — Անատոլուի քննիչ յանձնաժողովին նախագահ ընտրուեցաւ Էվգաֆի նախարար Խայրի պէյ, բայց մեկնումի համար ճամբաներու բացման պիտի սպասուի : Առ այժմ հրամայուած է փութով վերակազմել Էրզրումի, Պիթլիսի և Վանի նահանգներուն ոստիկան զինուորութիւնը : Պատրիարք Հայրը Ներքին գործերու նախարարը շնորհաւորելու առիթով գրութիւն մը մատոյց, որով կը կրկնէ ինչ որ բերանացի ալ բացատրեց թէ Մուսայի և Գասըմի նման հանրաձանօթ չարագործներու ձերբակալման համար դատավճօր պէտք չկայ, և ըստ օրինի գործադրուելու է նախորդ նախարարին. օրով տրուած հրամանը : Նախարարը յանձն առաւ ի նկատ առնել խնդիրը և ըսաւ թէ պիտի յաջողի վերջ տալ կարգ մը չարիքներու : — Արմաշի Դպրեվանքին համար մէկ օրուան մէջ իրբ 200 ոսկի հանգանակուեցաւ Կ'ուզուրի այդ գումարը 300ի բարձրացնելու : — Տնտես. Խորհուրդը ձեռնարկած է հասութեան կայուածի մը յատկացնել Իօանէսքուրի կտակը յօգուտ նպաստընկալ ուսանողներու : — Իզմիրցի Թարութիւն էֆ. Մարգարեան փափաքած է 3,000 ոսկի արժողութեամբ իր տունները ազգին կտակել, պայմանով որ վարձքերը ինք ստանայ մինչև իր մահը : — Զրոյց կայ թէ Միբ Մհէ սպաննուած է, Խոյթի Զաչան աւագակը և եղբայրը սպաննուած են, իսկ ընկերներէն երկուքը ողջ բռնուած : Պետրի աշիրէթը խոստացած է բռնել ծանօթ քահանային, ու Հայերուն սպանիչները : — Ռուսիոյ Երակոյտի յանձնաժողովը Յունի. 29ին սկսաւ իրբու Դաշակցական ամբաստանեալ 160 Հայերու դատը : Ամբաստանադիրը հազարաւոր էջէ կը բաղկանայ և հազարէ աւելի վկաներ պիտի լսուին :



ارادای هفته‌ای غزیه - در سعادده بایبل هازسده - مدیر مسئول - صموئیل ق. هارونیویان

**ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Տարեկ. բանեցին 40 ԴՏ.  
 Ամերիկայի համ. 2 Տալ.  
 Անգլիոյ " 8 շիլ.  
 Աւստրալիայի " 10 Տր.  
 Զեւ. գէ. նաւը 40 Գ-ր-

Մանուցման գինները  
 չափաւոր

ԱՒԵՏԱՐԵՐ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Խմբագիր Հ. Ս. Պարբերմ

Պայպըլ Հասու, Կ. պոլիս, Թուրքիա

THE AVEDAPER

AN ARMENIAN WEEKLY

EDITOR H. S. BARNUM

American Bible House  
Cons/ple, Turkey

**ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Am. Subscrip. Frs. 40  
 U. S. A. \$ 3  
 England Shils. 8  
 Other countries Frs. 10

Single Copy 40 Paras

Advertising rates on application

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՒՍԵՐ

1912 Տարուան Համար

Ներկայ 1912 տարուան թէ՛ Հայերէն թէ՛ Հայ-թուրքերէն կիրակնօրեայ Դասերը հրատարակուած և վաճառուելու պատրաստ են: Իւրաքանչիւր հատորի գինն է 2 դահ.: Կը փափաքինք որ ապսպրանքները անմիջապէս ըլլան:

Սաւաքարտի վրայ տղուած թէ՛ Հայերէն թէ՛ Հայաստան թուրքերէն կիրակնօրեայ Դասի Ոսկեղէն Համարները պատրաստ են: Փափաքողներ կրնան զիմել հետեւեալ հասցէին. Մը. Ու. Ու. Փիթ, Պայպըլ-Հասու, Կ. պոլիս:

ՄԵԶԻ ՂՐԿՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԱՄԵՐԻԿԱԿԱՅ ՏԱՐԵՑՈՅՑԸ, Մուշեղ Եպիսկոպոսի. գեղեցիկ և հոյակապ գործ մը չուրջ 400 էջ, ուր կը ծանօթացուի Ամերիկահայը անցեալին ու ներկային մէջ: Ունի նաեւ Գրական և Բանաստեղծական էջեր և ծիծաղներ. Դին՝ մէկ տղար. Տպ. Պոսթօն, Կիլիկիա Տպարան: Հասցէ՝ Cilicie Press, 795 Washington St. Room 2. Boston, Mass.:

ՀԱՅՐԵՆԻ ՏԱՐԵՑՈՅՑ, Սահակ-Մեսրոպի: Խնամուած ու գեղեցիկ գործ մըն է Հայերէն Տարեցոյցը, որ շարունակութիւնն է անցեալ տարուան «Գաւառին Տարեցոյցը» ինչ որ կը գեղեցիկ և ճոխ բաժիններ— Բաղադրացիին Յուշատետրը, Գրականութեան սիրահարներուն, Հայ սիրտ Հայ միտք, Հայրենի երկիր և Թանգարան, 70ի մօտ պատկերներ, մաքուր տպագրութիւն. էջ՝ 240, Գին՝ 7 դահ.: Զերմապէս յանձնարարելի բոլոր ընթերցասէրներու. Յարմարագոյն նուէր նոր Տարիի առթիով: Դիմել հեղինակին՝ Մ. Յ. Գոչուեան Տպարան, Պէտրիք Եէնի Խան, Թիւ 45, Կ. պոլիս:

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԵՂԻՇԷԻ ԱՍՐԴԱՆԱՆՑ ՊԱՏ-

ՄՈՒԹԻԻՆԸ Թարգմ. Յ. Վարժ., Տպ. Մանուկ Յ. Գոչուեան, 1911 Կ. պոլիս: էջ՝ 204, Գին՝ 7 դհ., Կեդրոնատեղի Մ. Յ. Գոչուեան. Տպարան, Մեծ Նոր Խան, Թիւ 45:

ՀԱՅԿՈՒՆԻ, Նորահաններու Կիսամեայ Հանդէս, Խճագրողի Գոգիկ Օղանեան: Բացուած է Բ. Շրջանի բաժանորդագրութիւնը: Թերթին Խճագրական և Վարչական մարմինները ամէն կարգադրութիւններ ըրած են անոր կանոնաւոր հրատարակութեան: պարունակութեանը՝ ճոխացման և առաքման համար: Բաժանորդագրութիւնը՝ որ չնչին գումար մըն է: անպայման կանխիկ է: Խճագրութիւնը ունի շատ աղուոր գրական խոստումներ: Բաժնեգրին Թուրքիոյ համար տարեկան 15 դր., Ամերիկայի համար 1 տղար, Արտասահմանի համար 4.5 ֆր., Հասցէ՝ Խճագրութիւն «Հայկունի» Հանդէսի, Մարզուան:

ԲՈՂԻՈՋ, Բացուած է բաժանորդագրութիւնը 1912ի Կիսամեայ «Բողոք»ին: Տարեկան քան թիւերու բաժնեգրին է Թուրքիա 15 դր., Ամերիկա 1 տղար, Եւրոպա 3 ֆր., Բուսիա 2 ռուպլի: Դպրոցականներու համար 12 դր. միայն: Հասցէ՝ Խճագրութիւն «Բողոք»ի, Մարզուան:

ԼԱՆԿԱՅԻ ԵԿԵՂԵՑԻ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ

Ի Պայպըլ Հասու, կիրակի (Փետր. 4), Ժամ 2. 45 (Ը. Ե.):

Հոգեւոր պաշտամունք՝ վաղը, Ժամը 3ին (Ը. Ե.): Կոստիկեան բնակարանի մէջ, Պոյաճըզիւղ: Պիտի խօսք Պատ. Կ. Յ. Բերրեան:

Կ. Պոստոյ Ե. Ք. Ընկերակցութեան Աղօթքի Ժողով, Ժամ 3.45ին (Ը. Ե.), Գուճափու, Միչըն Հասուի մէջ: